


ԼԵԿՈՆ ՇԻՐԻՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆ. ԳԱԼԻՔԻՆ ԸՆԴԱՌԱԶ



32

Զ-64

« ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ՓԻԼՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ, ՍՈՑԻՈԼՈԳԻԱՅԻ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԼԵՎՈՆ ՇԻՐԻՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆ. ԳԱԼԻՔԻՆ ԸՆԴԱՌԱՋ

ռազմավարական հողվածների ընտրանի

- Արևելյան Հայաստանի ռազմավարական կշիռը
- Հանքինգթոնի հիպոթեզը և Հայաստանը
- Ազգային և տնտեսական հիմնախնդիրների հեռանկարները

4.9.55



Երևան – 2004



Տպագրվում է ԳԱՍ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի
ինստիտուտի գիտական խորհրդի երաշխավորությամբ

ԳՏԳ 35:323(479,25)
ԳԱԴ 68*66.3(2Գ)
Ը 648

*Նվիրում են Գայատանի Գանրապետության հիմնադիր
ԱՐԱՄԻ Ա. Սամուկյանի չխանրող հիշատակին*

Պատասխանատու խմբագիր՝
փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Վ. Ա. ՍՍՏՐՅԱՆ

Շիրինյան Լ. Պ.,
Ը 646 Գայատան, գալիցիեն ընդամառ (նազնավարական հողավեճների ընտրամի),
եր., Չամբակ - 97, 2004, 40 էջ:

Գրովյանների տպն ժողովածուսանց ամբողջաթիվ է կատարվում հայոց ազգ - պետության
հիմնախնդիրներին և նրա կառուցման հեռանկարներին: Նախատեսված է մեծ ռազմավա-
րություն ոլորտի մասնագետների, քաղաքագետների և շահագրգիռ ընթերցողների համար:

Ը 1302000000 2004 ԳՄԳ 68*66.3(2Գ)
0003(01) 2004

ISSN 99930 - 2 - 927 - 0

© Լ. Շիրինյան
© «Չամբակ-97» իրատարակչություն

Պատասխանատվության տնօրեն՝
Վերապետական խմբագիր՝
Արմազդիշ
Պատասխանատու մասվորումը՝
Շատիրի համակարգչային մշակումը՝

Ս ա շ ա Ս ն ա ց ա կ ա ն յ ա ն
Արա Բ աղ դ ա ս ա ղ ա ն
Ն ա ր ի ն է Ն եր ս ի յ ա ն
Լ ա լ ա Յ ո ս ե ի յ ա ն ի
Ե իր Ե մ ա վ յ ա ն ի

Տպագրությունը՝ օժտել: Շատիր՝ 6884 118 Քուրդը՝ Շատիր:
Շատիր՝ 2,5 տպ. մասով: Տպագրանակը՝ 150 օրինակ:
Գրվել է պատմագրությամբ:



* «ՉԱՄԲԱԿ-97» ՊՐԵՍՍՎՈՒԹՅՈՒՆ
375051, Երևան, Կոմիտասի պող. 49/2, հեռ.՝ (+3741) 23-25-28,
ֆաքս՝ (+3741) 23-25-85, էլ. փոստ՝ info@zangak.am,
էլ. կայք՝ www.zangak.am

ԱՐԵՎԵԼՅԱՆ ԳԱՅԱՍՏԱՆ. ՈԱԶՏԱՎԳԻՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ

Տեղեկանք: Գայատանի Գանրապետությունը սահմանակից է
արևմուտքից Թուրքիային, հարավ-արևմուտքից՝ Նախիջվանին (Ադրբեյ-
ջանի ինքնավարություն), որն իր արևմտյան ելուստում ունի Թուրքիայի
հետ ընդհանուր սահմանաշերտ (շուրջ 10 կմ), հարավից՝ Իրանին 46 կմ
ընդհանուր երկարությամբ, արևելքից ԼՂՀ-ի հետ միասին Ադրբեյջանին,
հյուսիսից՝ Վրաստանին: Արցախյան ազատամարտի հետևանքով «Անդրու
միջանցքը» շարժվել է արևելք շուրջ 170 կմ-ով:

Արցախի ազգային-ազատագրական պայքարը, որը հանգեցրեց Լեռնա-
յին Ղարաբաղի Գանրապետության (ԼՂՀ) կազմավորմանը, ԽՍՀՄ լուծարու-
մից հետո վերածվեց միջազգային քաղաքականության խնդրի ու տարա-
ժաշրջանային վերադասավորումների տարրի: Չուզահետաքար ԼՂՀ անկա-
խության միջազգային ճանաչումը աստիճանաբար ստացվեց փակուղի, թե-
կուզև խորհրդային Լեռնային Ղարաբաղի Բնքնավար Մարզի (ԼՂԻՄ) կարգա-
վիճակի փոփոխությունը՝ ինքնավարությունից անկախություն, իրականաց-
վել էր և՛ ԽՍՀՄ համապատասխան օրենսդրության, և՛ միջազգային իրավուն-
քի շրջանակներում ամբերի, և գլխավորը՝ ձեռք էր բերվել ժողովրդի ինքն-
պաշտպանության անստորելի իրավունքի հիման վրա:

Գատկանշական է, որ «Ղարաբաղյան շարժման» հանդեպ Արևմուտքի վե-
րաբերմունքը նրա սկզբնական փուլում, եթե իրականացված էր (թերևս այն
դիմելում էր ԽՍՀՄ կազմալուծման ազդակներից մեկը), ապա Գարաբաղյան
Կովկասում Ռուսաստանի ազդեցության թուլացմանը համընթաց, այն դար-
ձավ ավելի չափավոր և տեղափոխվեց ժողովուրդների ինքնորոշումից, այ-
սինքն՝ թազմազգ պետությունների ներքին գաղութային գործընթացներից,
պետությունների տարածքային ամրոցականությունը, այսինքն՝ միջպետա-
կան հարաբերությունների ոլորտ:

Անտեսելով նախկին ԽՍՀՄ ինքնավարության ժողովրդավարորեն արտա-
հայտված ինքնիշխան կամըց ԼՂՀ հռչակված մասին (02.09.1991 թ.), տարբեր
փորձագետներ (օրինակ, Փուլ Գորլ* և ուրիշներ) և միջազգային կազմակեր-
պություններ առաջադրեցին և շարունակում են դրոնել հիմնախնդրի կարգա-
վորման (և ո՛չ լուծման) տարբեր նախագծեր, որոնցից մեկն է «տարածքների

* Գորլի առաջարկության մշանակության վերլուծությունը տես Լիճան Կիմսենք: «Ի՛նչ
է ատուն Փուլ Գորլը և ո՛վ է նա», «Դրօշակ», 1992, թիվ 15, էջ 19-21:

փոխանակման» տարբերակն է: Հայկական կողմին առաջարկվում է Հայաստանի Հանրապետության նախկին Մեղրու վարչական շրջանը, այսպես կոչված, «Մեղրու միջանցքը» փոխանակել (իրականում համեմունկ) հետխորհրդային Արրեբջանի երթևիցե մասը չկազմած ԼՂ ինքնիշխան պետության տարածքների հետ: Այսպիսով՝ հետխորհրդային Արրեբջանը հնարավորություն է տալու՝ միջազգային հանրության օժանդակությամբ իր մասը չկազմող և նրա վրա որևէ ազդեցություն չունեցող ԼՂՀ տարածքների հաշվին իրեն բռնակցել (անքնսիայի ենթարկել)՝ Հայաստանի Հանրապետության անջակցելի մասը կազմող ռազմավարական «միջանցքը»:

Ստեղծվում է տարրինակ և քերտես համաշխարհային պատմությանը բողոքովին ամենամոթ մի նախադեպ: Եթեկիական գտնանա ու պատմամշակութային ցեղասպանության փորձի դիմաց և ազրեսիայի համար պատժված կողմը Արրեբջանը, փորձում է համաշխարհային հանրությանը մոլորեցնելու: Ճանապարհով իրեն ենթարկել (բռնակցել) քաղաքացիորեն իրենից տարբեր (ԼՂՀ ազգասակցությունը միաբանել հայեր են), իր ժողովրդի հետ եթեկիական որևէ ընդհանրություն չունեցող (գեներես ապրող աղրեբջանցիները հիմնականում քյուրդական շիա-մահմեդական ցեղեր են) և լեզվամտածողությամբ առանձին էր ժողովրդի: Այսպիսով՝ ինչը չհաջողվեց գեներ ռուժը առաջ տան, փորձ է արվում ձեռք բերել դիվանագիտության խարդավանքներով:

Անտեսվում է առեսարակ ՄԱԿ-ի 1970 թվականի Հոչակազիրը, որը հաստատում է ժողովուրդների ինքնորոշման իրավունքը և պետությունների վրա դնում որոշակի պարտականություններ: «ժողովուրդների իրավահավասարությունը և ինքնորոշման սկզբունքի ռուժով, որը ամփոփված է ՄԱԿ-ի կանոնադրության մեջ,— ասվում է այնտեղ,— բոլոր ժողովուրդներն իրավունք ունեն առանց արտաքին միջանտության որոշելու իրենց քաղաքական կարգավիճակը և իրականացնել իրենց անտեսական, սոցիալական ու մշակութային զարգացումը և յուրաքանչյուր պետություն պարտավոր է հարգել այդ իրավունքը համապատասխան կանոնադրության դրույթների (ընդգծումը ինձ է,— Լ.Ը.)»:

Այդ դեպքում առաջանում է հարց. միջազգային իրավունքի շրջանակներում ամենապարզ հարցը ինչ է՝ և տեղափոխվում երկրաքաղաքականության (գեոպոլիտիկայի) քարոչ ոլորտ: Առաջարկ կամ հիմնախնդրի կարգավորում տվյալ տարբերակով պարզ է, երկրաքաղաքականության (գեոտրատետիզմ) քննազակածից է և ունի առնվազն երկու ենթաշերտ.

ա) **Տարածաշրջանային ենթաշերտ:** Տարածաշրջանի ենթադրյալ փոխանակությունը հայ ժողովրդի ազգային տարածքի վրա նրա պետական կազմավորումների երկու հատվածների միջև հուզուր հետխորհրդային Արրեբջանի, վերջնականորեն կասկածի տակ է դնում ինչպես ՀՀ և Արրեբջան գոյությունն առեսարակ, այլև հեռանկարից զերում է հայ ժողովրդին իր հայրենիքի վերջին հատվածում իր գոյությունն ու մշակութային ինքնությունը

պահպանելու, էլ չասած քարգավածելու հնարավորությունից: Այսպիսով տվյալ տարբերակը մինչև վերջ խարխուլում է հայոց ազգային անվտանգության հիմքերն ընդհանրապես: Ախս երկու ժողովրդի ազգային ինքնագիտակցության ներքին ծալքերում «տարածքների փոխանակման» տարբերակը վերածվում է 1915 թվականի Հայոց ցեղասպանության մղծավանքի վերուշի:

Ավնիայտ է, որ «Մեղրու միջանցքի» քոնակցումից հետո, քյուրդական երկու՝ թուրքիայի և Արրեբջանի պետությունների միջև կառաջանա անընդմեջ ցամաքային կապ (տարածք) Ատանբուլից մինչև Բաքու, իսկ Հայաստանի Հանրապետությունը ամսահիմունեն կենտանա Իրանից իր գոյության ու անվտանգության ռազմավարական կանտրազուրն խարխիսներից մեկից: Չարգազակն տարբերակի իրականացումը, հետևապես, ՀՀ-ն ԼՂՀ-ի հետ միասին կվերածի քյուրդական ցրավազան նետված մի շշի, որի խցանը կզտնվի եթեկիական հակամարտություններից բզկտվող և քրջամետ Վրաստանի գրպանում: Հետևապես, ազելորդ է անգամ կանխատեսել ռազմավարական այն աղետը, որին կենթարկվի Հայաստանն ու հայությունը ողջ աշխարհում: Եվ ՀՀ-ն, և ԼՂՀ-ն կկորցնեն իրենց ռազմագիտական ճշմասկությունը՝ վերածվելով սովորական աշխարհագրական հետնախորշի, իսկ հայոց քաղաքակրթական ինքնության վերաջուլը կդառնա ժամանակի հարց: Հետևապես, հայկական կողմը չի կարող համաձայնել «տարածքների փոխանակման» և ոչ մի տարբերակին: Այստեղ, «խնդրի կարգավորման» շրջանակներում, չի կարող դեր խաղալ ոչ իշխանափոխության պերմանենտ շղթան, ոչ էլ ինչ-որ հաշտեցման հանձնաժողով:

բ) **Միջազգային ենթաշերտ:** Ո՛վ կշահի տարածքների ենթադրյալ փոխանակությունից: Բնականաբար, թուրքիան և քյուրդական Արրեբջանը: Առաջին հերթին կիրականանա պանբրուդիստների իրեսալը, անընդմեջ ցամաքային հաղորդակցություն առաջացնել Նախիջևանի՝ և Մեղրու միջանցքի՝ վրայով թուրքիայի և Արրեբջանի միջև: Այս ուղղությամբ առաջին քայլն արվել է դեռևս 1920-ական թվականներին, երբ թուրքիան ներ սահմա-

* Հայկական Նախիջևանի արդի կարգավիճակը սահմանվել է ռուս-քյուրդական 1921 թվականի մարտի 16-ի համաձայնագրով: Վերջինիս 3-րդ հոդվածը թելադրում է. «Երկու պայմանագրով կործնող համաձայն են, որ Նախիջևանի մարզը... կազմի ինքնավար շրջան Արրեբջանի համանակութային տակ, պայմանով, որ Արրեբջանը այս խմանակությունը չի գեղի երրորդ պետության»: Եվ առեսարակ, Անտանոսի «կրուսի» դաշնակցությանը թաժամուն ու քոնազակունը լենինյան Ռուսաստանի և քեմալական թուրքիայի կողմից տիրառեսակ Մոսկուով-Ռիթենբուրգ (1939 թ., 23 օգոստոսի) դաշնագրի նախատիպն է և նրա առաջին գործարդունը: Հիշատակենք ժամանակակից քուրդ հետազոտող Բյուլենտ Արազի ցինիկ խոստովանությունն այն ալմ, որ ժամանակակից թուրքիայի հովանադիր Թեմալ Աքսարյուրը գերարյանց ժամտերի արանքով նալել այն բանի վրա, որ Անվատում ապրում են մեր եղբայրացիները: Ղրբ համար նրան տվեցին «արսն» ու Արրեբջանը՝ հտտիորային Ռուսաստանի հետ անխաղա սահման հաստատելու համաձայնության փոխտեմն: (Տես Արազ Բ., Թուրքիա, ՄԱրրովկասի պետությունների հետ հարաբերությունների որոշ առանձնատկությունները, «Կենտրոնական Ասիա և Կովկաս» (Ռուս.), 2001, քիվ 5, էջ 100):

1 *Տե Արեչազ Էդարժո Խմենես. Տոբերնե մեժուրնառոնե քրառ. Քեր. Տ իսլ. Մ., 1983, տր. 160.*

նշանակումը (չուրք 10 կմ) սահմանակից դարձավ Նախիջևանի խնամակալությանը: Ըստ նշտարբուն բուրբերի, գործուրյա Իսմայիլ Ձեմի, հերքը հասել է Նախիջևանն ու Ադրբեջանը իրար կապող «սակտանգուրյան միջանցքին»: Ռոբից հետո հավանաբար կարելի է «եվրասիանային» օրինակով ստեղծել ցեղակից պետությունների «Թյուրքստան»:

Սեզ հայտնի չէ, թե արդյոք պրմ Գորլը և ընկ. տեղյակ են թյուրքական այս իդեյան մասին, որի իրականացման ուղղությանը առաջին փորձերը կատարվել են դեռևս Սաջին աշխարհամարտի տարիներին, սակայն ավելորդ չենք համարում հիշեցնել թուրք զինվորական-պետական գործիչ Խալիլ փաշայի 1918 թվականին արտահայտած մի «ամենդ» քաղաքացի մտային: «Հարթական Խալիլ փաշան.— վկայում է ՀՀ քաղաքական և զինվորական գործիչ Ռուբեն Տեր-Մինասյանը.— չէր մեծերը սկզբունքով Հայաստանի հողերի ընդարձակման պահանջը: Նա կանխիկ կառաջարկեր, որ Խայենը դատարկեն Ձանգեզուրի Մեղրիի գավառակը, որպեսզի իրենք ամնիջապես կապվեն Բաքվի հետ. ի փոխարեն դրան պատրաստ էր ի հաշիվ Ադրբեջանի ընդարձակել Հայաստանի սահմանները, դեպի Տիվլանջիղ և Կարանդա (այսինքն՝ դաշտային Արզախի չէ արևելք.— Լ. Ե.): Դա փաստորեն կնշանակեր ուժ տալ պանթուրանիզմին: Նա կառաջարկեր զինվորական դաշինք կնքել Դաշնակիցների դեմ: Մյս կնշանակեր վերջին հույսը և ջուրը ձգել: ...»: Երիտասարդ հանրապետության իշխանությունները, բնականաբար, մեծածնին թուրքական առաջադեմ: Շարունակեցին պայքար թուրքական արշավանքի դեմ և ինչպես նկատում է զեմերալ Լյուդեմիրը, Անդրկովկասում «Թուրքիայի դեմ միայն Խայեն էին կռվում 1918 թվականի սկզբներին ռուսական բանակի հեռանալուց հետո և ութ ամիս կանցողին Բաքվի գրավումը»⁵: Նույն Ռուբենը 1926 թվականի օգոստոսի 11-ին գրում էր Մուսաշեն Չիլինգարյանին. «Մխիթարական չէ երկրի քաղաքական կառույցը: Հայաստանը թույլ է, կողիսցած Վրաստանի և Ադրբեջանի գերիշխանության տակ: Այժմ հարց կա Մեղրիի տալ Ադրբեջանին, Նախիջևանը ընդարձակելու»⁶:

Թերևս արժե հիշելը, որ ի տարբերություն պրմ Գորլի և ընկ. Նույնիսկ ֆաշիստական Գերմանիայի դեկադարությունը չէր հասկանում «տարածքների փոխանակման» հետևանքով առաջացող երկրաքաղաքական արեղի հնարավորությունը: Այն վերջին հաշիվով ճշանակում է «հայկական սեպի» անկասկած: Քաղաքական աշխարհին ոչ անհայտ Ալֆրեդ Ռոզենբերգը վկայում է. Հիտլերը «իմ կարծիքը հարցրեց Խայերի մասին (Օրբելայցեբերգ, 22 օգոստոսի 1939 թ.— Լ. Ե.): Ես ասացի նրան, որ Հայաստանը լավագույն դարպասն է Թուրքիայի և Ադրբեջանի միջև, որի շնորհիվ մե կարող է կասեցնել պանթուրանական շարժման առաջխաղացումը դեպի Արևելք: Ընդհանուր առմամբ,

Խայերը նստակյաց ազգ են և հնուտ արիստակրոն»⁷: Ստացվում է, ուրեմն, որ ինչպես պրմ Գորլը, այնպես էլ «տարածքների փոխանակման» տեսակետի, կողմնակիցները դուզվեցին չեն հեռացել զուտ ժողովրդական տեսակետից:

Մյս ենթադրյալ փոխանակությունից կշարի, անշուշտ, նաև Արևմուտքը, սակայն, սուկ մարտավարական առումով: Իսկ տամուկ կտա ռազմավարական հեռանկարը: Քանզի, մարտավարական իմաստով, իրողություն կդառնա Արևմուտքի, գլխավորապես ՄԱՄ-ի, ընթացիկ քաղաքականության անցողիկ նպատակը Հարավային Կովկասին: Հյուսիսից Իրանը թյուրքական «սանդ-տարիական միջանցքով» կբաժանվի Հարավային Կովկասից գլխավորապես Հայաստանի Հանրապետությունից և Եվրոպայի, թերևս Ռուսաստանի հետ հարողակցվելու հնարավորությունից, կիսատմիկ եքնիկական արիստական հակամարտությունների լարիղինթուսում: Ռազմավարական հսկայական վնասներ կկրի Ռուսաստանը՝ դեպի հարավ Հարավային Կովկասով իր ելքը պայմանավորելով թուրք-ադրբեջանական ջմահանդյունքերով, ամնիջապես ստանալով հակառուս տրամադրությունների էլ ավելի մեծ ան Վրաստանում:

Ինչպես ասվել է, սակայն ռազմավարական առումով տամուկ կտա նաև Արևմուտքը: Անակոնդայի ռազմավարության կիրառումն այստեղ, ինչին հետևում է ՄԱՄ-ը տվյալ պարագայում, դժվար թե ռազմավարական հաջողություն ապահովի նրա համար: Քանզի խրախուսելով Թուրքիայի դեպի Արևելք տեղաշարժի ձգտումներում, կանանկան անժողացնելու է նրա ազգայնական տրամադրությունները, որից ամենաշատն զզուշանում է Նույն Արևմուտքը, առաջին հերթին ՄԱՄ-ը: Այսպես, օրինակ, Հ. Մակեդոնցի երկրաքաղաքական ընդդիմ (ժողով) քառագավ Ձր. Բժեզինսկին իրավագիտորեն նկատում է. Թուրքիան և Իրանը իրենց «երկրաքաղաքական կողմնորոշման մեջ զրոնորում են անհաստատու Մուրյուն և Ներքին առումով ներդրվի իմաստով խոցելի են»⁸: Ավելին. «...առաջվա պես պարզ չէ, թե ինչպիսին է լինելու նրանք երկրաքաղաքական կողմնորոշումը և Նույնիսկ ինչպիսին է լինելու գործերի ընթացքը երկու երկրներում էլ ազգային համախմբվածության տեսակետից»⁹: Մյս հաստատումներից հետո Բժեզինսկին Թուրքիայի պարագայում անում է իր երկրաքաղաքական կանխատեսումը, նրա ռազմավարական ապագայի ընդունյալ հարցում նախատեսում է երեք հնարավոր զարգացումներ. «Թուրքիան հետևյալսերական պետություն է.— գրում է նա.— որը ղեկու գտնվում է իր ընդունյալն որոշման գործընթացի մեջ, ձգում է երեք ուղղություններով. մոդեռնիստները գամկանում են նրանում տեսնել եվրոպական պետություն, և հետևապես, նայում են դեպի Արևմուտք, իսլամիստներ

⁵ *Քարտալյան Գ. Պ.*, Հիտլերը և Խայերի ցեղասպանությունը (թարգմ. անգլ.), Եր., 1991, էջ 44-45:

⁶ Անակոնդայի ռազմավարությունը ստվանդիզմի երկրաքաղաքական ուղղությունը, որը միտված է Եվրասիայի առավելագույն սահմանային տարածք պրկելուն նրա երկրաքաղաքական ընդարձակումը գնալելու նպատակով:

⁷ Բժեզինսկի Ձր., Մեծ շարժմասային տախտակ: Անդրկովայի գերիշխանությունը և նրա երկրաքաղաքական գերակայությունները (թարգմ. անգլ.), Մ., 1999, էջ 161:

⁸ Նույն տեղը, էջ 161:

⁴ Ռուբեն, Հայ հեղափոխականի մը հիշատակները, Թեհրան, 1982, հ. 7, էջ 145:

⁵ ՏՍ Կարոլեյն Կ. Խ. Коммунистическая партия в борьбе за победу Октябрьской революции в Армении, Ер., 1959, стр. 113:

⁶ ՏՍ և «Հայրենիք» (Բնատուն), 1963, թիվ 11, էջ 21:

րը հակված են դեպի Մերձավոր Արևելք և մահնեղական համագործակցություն, և այսպիսով, մայրու են դեպի հարավ, դեպի պատմություն մայրո ազգայնականները տարածաշրջանում տեսնում են Կասպից ծովի ավազանի և Միջին Ասիայի բյուրքական ժողովուրդների նոր դերակատարությունը, և այդպիսով մայրու են դեպի Արևելք: Այդ հեռանկարներից յուրաքանչյուրը պատկուծ և տարբեր ռազմավարական առանցքների շուրջ, և քեծականների հեղափոխությունից հետո առաջին անգամ այդ դիրքորոշումների միջև բախումը որոշ անվտանգություն է մտցնում Թուրքիայի տարածաշրջանային դերի հարցի մեջ»⁶: Եթե Թուրքիայի եվրոպականացումը ամհաջողության մատնվի ներքին, թե արտաքին պատճառներով, եզրակացնում է Բեզգինսկին, սակայն Դայաստանը և Վրաստանը ստիպված կլինեն «հարմարվել Ռուսաստանի շահերին»: Երանց ապագան այդ դեպքում կներածվի Ռուսաստանի էվկուսիցայի գործառույթի (Ֆունկցիայի), կախված Ռուսաստանի՝ ընդարձակող էվրոպայի հետ հարաբերությունների գարգացումներից⁷:

Անշուշտ, Բեզգինսկու ինչպես վերոշարադրյալ հաստատումները, այնպես էլ եզրակացությունները ճիշտ են արտացոլում Թուրքիայի և նրա շուրջը ընթացող խորքային գործընթացները, սակայն անակոճայի ռազմավարությանը հարազատ մնալու ծգտումը, Heartland-ը* (սիրտ-երկիր) ջախջախված տեսնելու բուռն ցանկությունը թույլ չեն տալիս գլոբալ ռազմավարության շրջանակներում (Թուրքիայի պարագայում) երկրառազմավարության շեշտադրումներն իրենց իսկական տեղը դնելու:

Բեզգինսկին գրեթե անտեսելով Թուրքիայի երկրառազմավարության մեջ ազգայնական ուղղության հնարավոր կետանգները, ինչը գլոբալ աղետի սաղմուն ունի իր մեջ, մերձակա և հեռանկարային պայքարի առաջնահերթ կենդիր է համարում նրա զարգացման իսլամական թեքման խնդիրները: Այս շեշտադրումը, անշուշտ, հատուկ չէ միայն Բեզգինսկու: Այդուհանդերձ, ես ստավել պարզությանը է ձևակերպել այդ տեսակետը: Ես գտնում էր, որ «Ամենաբնական պետք է օգտագործի իր ազդեցությունը էվրոպայում... պայմանով, որ Թուրքիայի ներքին քաղաքականության մեջ տեղի չունենա կտրուկ թեքում դեպի իսլամական ուղղություն»⁸: Երև դատողություններում ճույնիակ մասնաբույր պայտնայից էս դեպի էվրոպան: Այսպես. «Թուրքիան,— գրում է նա,— շարունակելով իրեն զգալ էվրոպայում իզգալ (վտարակ, անջատավոր — Լ.Շ.), կդառնա ավելի իսլամական»⁹: Ես անվական էր, որ Թուրքիայի քաղաքական դեկավարությունը, գիտենալով մնամ դիրքորոշման մասին, ճարավորեն շահարկում է և օգտագործում բեզգինսկիների այս «վախը»:

Անկասած է, որ Թուրքիայի թեքումը դեպի իսլամական երկրառազմավար

* Նույն տեղը:

⁶ Տե՛ս նույն տեղը, էջ 180:

⁷ Heartland՝ Մակեդոնիերի եզրը, որը իրենով նշանակում է ներքառաքային եվրասիական տարածքը, որի շուրջն է տեղի ունենում ցամաքային գարգացման տարածակալ շարժը: Դանընկնում է Ռուսաստանի տարածքի հետ:

⁸ Նույն տեղը, էջ 241:

⁹ Նույն տեղը:

րություն որոշակի խնդիրներ կծնի Առաջավոր Ասիայում և գլխավորը Արևմուտքի ու Իսրայելի հետ հարաբերություններում, սակայն, ինչպես մեզ է թվում, էլ ավելի մեծ բարդություններ կառաջացնի ազգայնական ռազմավարությունը Ռուսաստանի հետ: Վերջինս ստիպված կլինի «կենտրոնանալ» և «կենտրոնացնել»՝ «մերձավոր արտասահմանը», ինչից զգուշանում է Արևմուտքը: Կարծում ենք, «կկենտրոնանա» նաև Արևելքի արքանացող հսկան Չինաստանը և կիդիսի իր երկրառազմավարության շեշտադրումները, հասկանալի է, ինչու: Այդ բլուկին կմիանա, ուզի թե չուզի, Իրանը և այլն: Այնպես որ, ազերոսրին «խաղացնելու» մասնաբույր ծգտումն իր մեջ ունի տարածաշրջանային անվտանգությունից դուրս նետելու հսկայական կարողականություն: Աշխարհը, սակայն Մյունխենի հետևանքները մի անգամ ճաշակել է... Եվ ճիշտ է Բեզգինսկին, երբ գրում է, թե Դայաստանն ու, թերևս, Վրաստանը այդ պարագայում կենտուն Ռուսաստանի գիրը, քայց դա է, արդո՞ք Արևմուտքի ռազմավարության ներքին տրամաբանությունը... Եվ համուն ինչի՞...»

Ուշագրավ է Վ. Պ. Ստուպիչինի դատողությունը: Անհանգստացած Ռուսաստանի, էվրոպայի, և ինչու չէ, ԱՄՆ—ի ապագայով, համամարդկային արժեքների համար, նա գրում է. «Անդրկովկասում, Ղարաբաղի շուրջ և մյուս «թեծ կետերում», որոնք երևան եկան որպես հետևանք կայսերական փոքր մտածողության երբ ոտնահարում են ժողովուրդների ազգային իրավունքները, որոնք բուն ծովման չեն ենթարկվում, լուծվում է ոչ միայն Ռուսաստանի, այլև ընդհանուր մարդկային արժեքների ճակատագիրը»: Դանմայն լինելով Վ. Պ. Ստուպիչինի տեսակետի հետ, կցանկանայինք միաժամանակ հավաստել, որ, իրոք, «էվրոպան խորպան շահագրգռված է, որ հարկադրի թուրքերին հարզել այդ արժեքները, հարգել միջազգային իրավունքը, հարզել միջազգային համագործակցության քաղաքական հիմքերը, այսպես համաբյուրեղական ժամտախտը կկսի տարածվել աշխարհով մեկ...»¹⁰:

Իսկ «համաբյուրեղական ժամտախտը» կտարածվի, առաջին հերթին հավանաբար «հայկական դարպասով»: Ամանավանդ, որ այդ ճանապարհին գուգահեռ թուրք—պարսկական համաձայնագրով (1932 թ.) Թուրքիան կարողացել է թուրք—պարսկական սահմանագծի իրականացումը հատվածում տարողացների շահակետ փոխանակության միջոցով տիրապել սահմանագծի ռազմագիտական նշանակություն ունեցող կետերին: «Դարականների հետ ունեցած նրա (Թուրքիայի—Լ.Շ.) սահմանների հյուսիսային մասերը բռնում են ռազմագիտական այն կետերը, հաղորդակցության այն ուղիները,— արժեքում է Ա. Վրացյանը,— որոնք ուղիղ գծով, թուրք մասնագետներին փոխում են ռուսական ռուսական Արդեշահանների վերայով տանում են դեպի Կասպից ծով և Անդրկովկասյան երկրներ»¹¹:

Ինչէլ: Խոսք տանք ռուսական այլ հեղինակների նա: Երկրաշրջական իմաստով, գրում է ոչ անհայտ Ալ. Արաբաուդը, հատուկ կարևորություն ունի այժմ գոյություն ունեցող «ոչ մեծ ճեղքը», այսպես կոչված «Մեղրու միջանցքը» հայ-

¹⁰ Ստուպիչին Վ. Պ., Ղարաբաղյան կոնֆլիկտը. 1992—1994, (ռուս.), Ս., 1998, էջ 23:

¹¹ Վրացյան Մ., Թուրք—պարսկական սահմանակետը, «Դրոշակ», 1929, թիվ 6—7, էջ 126:

կական տարածքում, որը բաժանում է Թուրքիան աղբյուրանական անկլավ Ասիիքսանով մնացած Ադրբեջանից՝ Կասպից ծովով ուղիղ հաղորդակցության միջին Ասիայից: «Միս թե ինչու, — ասում է Արքատվոր, — Յայատաանի և Ադրբեջանը միջև տարածքների փոխանակումը, ներառյալ Լեռնային Ղարաբաղը, կլինի ոչ չափավոր Ռուսաստանի համար»¹⁴: «Դարզվում է, մի այլ ռուս փորձագետ, Վ. Կիկոնովը միայն վերջերս է հանկարծ իր համար հայտնագործել, որ 1921 թվականի ռուս-թուրքական գործող պայմանագրով, որով Յայատաանը բաժանվեց բոլշևիկյան Ռուսաստանի և քեմալական Թուրքիայի միջև, «Ռուսաստանն է Անդրկովկասի երեք պետությունների սահմանների երաշխավորը, ինչպես նաև երաշխավորը Կրասնոստանում Աջարիայի և Ադրբեջանում՝ Լախիջանի ինքնավար կարգավիճակների»¹⁵: Իսկ մենք, մեր հերթին, շատ լավ գիտենք, որ ամենևին էլ Ալիսայի հայելիների աշխարհում չենք ապրում:

Մի ոչ անկարևոր հանգամանք է: Թուրքիայի գալիքի վերաբերյալ կանխատեսումներում, ինչպես տեսանք, Բեքզինսկին նախատեսում է երեք հնարավոր տարբերակ և նրանք հատուկ առանձնացնում է միմյանցից: Սակայն, Բեքզինսկին չի կարող չգիտենալ, որ հասարակական կյանքում առիտասարակ, այն էլ երկրաբաղաջական վերադասավորումներում, ապագային միտված զարգացումները չեն կարող դրսևորվել մաքուր տեսքով, իրարից բացարձակ առանձին: Գետնապես, ենթադրելով, որ արմատական իսլամը կամ իսլամական արձատականությունը Թուրքիայում է կենրկայան պանթյուրքիզմի շաղակառուց: «Պատմության մեջ մի անգամ արդեն դա տեղի է ունեցել: Իսկ փորձել Թուրքիան ուղղորդել դեպի Արևելք, թեև ուզվեց Ամերիկյան խողովակով, կենսական ուժեղացնել նույն արձատական իսլամը նույն Թուրքիայում:

Եկատենք, որ ԱՄՆ-ում բոլոր ռազմագետները չեն, որ բաժանում են Բեքզինսկու դիրքորոշումները: Օրինակ, Գրանտ Գուլլերթ այսօր էլ Թուրքիայի երկրառազմավորության մեջ, Բալկաններից մինչև Արևմտյան Չինաստան, ցույց է տալիս պանթյուրքիզմի տարրը: Թուրքիան ձգտում է, նկատում է Գուլլերթը, ստեղծել բուրբալեզու պետությունների միություն: Թերևս այստեղ արժե Բեքզինսկու պնդմանը տալ հետևողական երանգ: Իսկ դա ընդհանրապես և ամբողջությամբ առած համապատասխանում է Թուրքիայի փաստական հնարավորություններին:

Եվ առիտասարակ, Թուրքիան Արևմուտք չէ, որը շատ լավ գիտակցում է Եվրոպան: Այլ է նրա մշակութային ինքնությունը: Եվ ճիշտ է Ս.Դանթիգրոնը, որը նկատի ունենալով Թուրքիայի մշակութային երկատվածությունը այդ երկրից անկախում է «պատանակված երկիր» («torn-state»)։ Այսպիսի երկրները առանձնանում են երկու երևույթով, գրում է Դանթիգրոնը. «Դրանց առաջնորդները խտում են նրանց մասին որպես երկու երկրների միջև «կամրջի»,

¹⁴ Արքատով Ա. Գ., Ռուսաստան, ազգային անվտանգությունը 90-ական թվականներին, «Միջազգային տնտեսություն և միջազգային հարաբերություններ» (ռուս.), 1994, քիվ 9, էջ 14:

¹⁵ Տես «Լոկոյն փեյնյա», 27 ապրիլի 2002 թ.:

իսկ դիտորդները նրանց նմանեցնում են երկերեսանի Յանուսի հետ»¹⁶: Քեմալը, գրում է Դանթիգրոնը, Թուրքիան վերածեց «բզկաված երկրի»¹⁷: Նման երկրներում «գերիշխում է մի քաղաքակրթություն, սակայն նրանց առաջնորդները ցանկանում են փոխել նրանց քաղաքակրթական նույնականությունը»¹⁸: Ըստ որում, այդպիսի երկրները «անվտանգ են իրենց մշակութային նույնականության մեջ»¹⁹: Հասկանալի է, որ այդպիսի երկրից մնայուն ռազմավարություն դժվար է ակնկալելը պատմական հեռանկարի առումով: Մա, անշուշտ, հասկանում է Դանթիգրոնը և հարևանցիորեն այն ընդունում:

Եվ վերջինը:

Անկասկած է, ինչպես գրում է Բեքզինսկին, որ Միացյալ Նահանգների ազգային շահերի չի բխում «ստույգ թշնամանքի պահպանումը ամերիկա-իրանական հարաբերություններում»²⁰, մի ժողովրդի պարսիկների հետ, որին բնորոշ է, նույն Բեքզինսկու արտահայտությամբ, «բարձր աստիճանի ազգային և նույնիսկ կայսերական ինքնագիտակցությունը»²¹: Անշուշտ, Բեքզինսկին չի փայլվում այս պարագայում, սակայն բերում է ցանկությամբ տալ իրականության կերպարանք, երբ պնդում է, թե Թեհրանի մոսկովամետ դիրքորոշումը մարտավարական քննարկում է, թեև ուզվեց այստեղ, այդուհանդերձ, որոշակի դեր ունի Միացյալ Նահանգների արտաքին քաղաքականության «իրավաչափությունը»:

Թերևս, ռազմավարության տեսանկյունից Ամերիկայի համար ցանկալի է, իսկապես, Իրանի «վերադարձը, արևմտամետ դիրքորոշումներ»²², սակայն ոչ Մոսկվայի հետ հակադրության հաշվին, ինչը ստեղծված երկրաքաղաքական իրադրության մեջ հնարավոր էլ չէ: Դա, մասնավորապես, ԳԳ-ին թույլ կտար ավելի վտանգ վարել պետականության ամրապնդման քաղաքական գիծը, և ավելի հանգիստ մայել իր ազգային անվտանգության հիմնախնդիրներին: Գալիքը, թերևս իր մեջ ունի զարգացման այս սաղմը: Դա թույլ կտար նաև հայկական երկու պետական կազմավորումներին չիլ մտածել երկրաքաղաքական վարական կողմորոշումների և արտաքին միջամտությունների վտանգի մասին, իսկ հայ ժողովրդին որպես Արևելքում արևմտյան քաղաքականության տարրերի կրողի համեստ առաքելության իրականացման մասին: Նման պարագայներում է, սակայն, որ Բեքզինսկու մի քիչ պակասում է «վիստյան իդեալիզմը»:

Վերջինի հաշվով, տարածաշրջանում և նրա շուրջ առաջացած հակասական

¹⁶ Դանթիգրոն Ա., Բաղաքակրթությունների բախումը և համաշխարհային կարգի վերականգնությունը (ռուս.), «Pro et Contra», հ. 2, քիվ 2, 1997, էջ 132:

¹⁷ Լոյն տեղը, էջ 124:

¹⁸ Լոյն տեղը, էջ 132:

¹⁹ Լոյն «Արևմուտքը եզակն է, սակայն համապարփակ չէ» (ռուս.), «Դանաշխարհային տնտեսություն և միջազգային հարաբերություններ», 1997, քիվ 8, էջ 88:

²⁰ Բեքզինսկի Շր., նշվ. աշխ., էջ 241:

²¹ Լոյն տեղը, էջ 162:

²² Տես նույն տեղը:

²³ Լոյն տեղը, էջ 180:

իրադրությունը, երկրաքաղաքական ճառագայթների հզոր բախումն ու փոխադարձ չեզոքացումը ուրվագծում են հենց այս ապագան: Իսկ տարածքների փոխանակման տեսանկյունի համար տեղ կա պատմության աղբակույտի մեջ:

ՀԱՆՁԻՆԳՈՒՆԻ ՀԻՊՈԹԵԶԸ ԵՎ ՀԱՅՈՑ ՔԱՂԱՔԱԿՐԹԱՎԱՆ ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆԸ

(հայեցակարգի ուրվագիծ)

Նոր աշխարհակարգի ծնավորումն և նրա համատեքստում աշխարհի տարբեր մասերում ընթացող գործընթացները հետխորհրդային տարիներին դարձան ռազմավարության (երկրաքաղաքականության) ոլորտի տարբեր հեղինակությունների վերլուծությունների առարկան և զուգահեռաբար առաջադրվեցին գալիքի տարբեր նախագծեր:

Դրանցից մեկն էլ «քաղաքակրթությունների բախման» հանքիներգության հիպոթեզն է, որը, նկատենք, դարձել է 20-րդ դարավերջի և մեր օրերի ռազմավարական մտքի կատալիզատորը՝ հարցադրումների նորարարությամբ և հաճախ լուծումների, ուղղակի ասենք, անսովորությամբ:

Ասվածի տեսանկյունից որոշակի հետաքրքրություն են ներկայացնում Անմյուել Չանթինգթոնի՝ Դայաստանին և հայ ժողովուրդին վերաբերող դատողությունները, այդ շրջանակներում նաև Արցախի խնդրի շուրջ ընթացող քննարկումների տրամաբանությունը: Ինչպես մեզ է թվում, «հայկական թղթածրարի» հանքիներգության իմացությունը, որը դրսևորվում է ինչպես նրա առանձին հոդվածներում¹, այնպես էլ 1996-ին լույս տեսած մենագրու-

թյան մեջ², որոշակի լրացումների ու ճշգրտումների կարիք ունի, քանզի Չանթինգթոնը սուկ հետազոտող և շարժախոն քաղաքացի չէ, այլ ԱՄՆ քաղաքական իսթեբլիշմենտի (establishment) հեղինակավոր անդամ և policy-maker-ներից մեկը: Չէ որ Չանթինգթոնի կարծիքի հետ հաշվի է նստում ամերիկյան քաղաքական ընտրամին, նրա տեսակետը քննարկվում է աշխարհում մեկ և ազդում է տարբեր ժողովուրդների քաղաքական ճակատագրի վրա: Իսկ եթե հաշվի առնենք նաև Ալ. Դուգինի կողմից Չանթինգթոնի որպես համա-րապետականների խոսափողի որակավորումը՝ թե՛ նա, Չանթինգթոնը, թավա-կան ճշգրիտ է արտացոլում երկու նորագույն երկրաքաղաքական (զենավորի-տիկական) նախագծերից մեկի՝ նետատանտիզմի (պահպանողական ուղղու-թյուն) էությունը³, ապա հետևության պատկերն առավել պարզ կդառնա:

Ուստիև վերոշարադրյալի լույսի ներքո առաջնահերթ նշանակություն է ծեռք բերում քաղաքակրթությունների հավանական բախման հիպոթեզում հայոց տեղի ճշգրտումը՝ քաղաքակրթությունների դասակարգման նրա կի-րառած գլխավոր չափանիշի կրոնի և կրոնական պատկանելության հաս-կանիշով: Այսպես՝ «կրոնը՝ գրում է նա... քաղաքակրթության կենտրոնա-կան, որոշիչ բնութագիրն է», և ամմիջապես մեջ է բերում Քրիստոֆեր Դաւ-սոնի (Ch. Dawson) այն պնդումը, թե «մեծ կրոնները այն հիմքերն են, որոնց վրա հիմնվում են մեծ քաղաքակրթությունները»⁴: «Կրոնը... կրկնում է մի այլ տեղ Չանթինգթոնը... քաղաքակրթության հիմնական որոշիչ հատկանիշն է...»: Եվ մեխանիկական նույնականություն տեսնելով Ուղղափառության և Արևելյան եկեղեցիների միջև, Չանթինգթոնը հայերին «տեղադրում է» «ուղ-ղափառ քաղաքակրթության» սանդղակում, ինչի հետևանքով Դայաստանը հայտնվում է ուղղափառ-պլավոնական աշխարհի կազմում: Իսկ Ռուսաստան-ին վերագրելով «ուղղափառ քաղաքակրթություն»... նկատում է ռուս հե-տազոտող Խկոլայ Յուստունովը... նրա համար (հետևաբար նաև Դայաստա-նի - Լ.Ե.) նախատեսում է «համագործակցության կրավորական ծն»⁵:

Ա. ԿՐՈՆԸ ՈՐՊԵՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱՆԻՇ. ՀԱՆՁԻՆԳՈՒՆԻ ՏԵՆԱԿԵՏԸ

Հայտնի է Չանթինգթոնի տեսակետն առ այն, որ հետերկրեն աշխարհում լրկալ քաղաքականությունը դասնում է էթնիկական քաղաքականությունը:

¹ Столкновение цивилизаций. Пер с англ. М.: ООО "Издательство АСТ", 2003, 603 с. (The Clash of Civilizations and the Remaking of World Order, New York, Simon and Schuster, 1996, 368 p.).

² Տես Դյուն Ալեքսանդր. Основы Геополитики. Геополитическое будущее России. Мыслить Пространством. Изд. 3-е, доп., М., 1999, էջ 115.

³ Хантингтон С. Столкновение цивилизаций. Пер. с англ., М., 2003, стр. 59-60.

⁴ Լույս տեղը, էջ 410:

⁵ Լույս տեղը, էջ 6:

¹ Huntington P. Samuel (Хантингтон Самюэл).

— Столкновение цивилизаций? — "Полит", 1994, N1, с. 33-46. (The Clash of Civilizations? — "Foreign Affairs", Summer 1993).

— Грядущее столкновение цивилизаций? (Краткий вариант статьи "Столкновение цивилизаций?" из газеты "Нью Йорк Таймс"). — "США: экономика, политика, идеология", 1994, N3, с. 39-41.

— Если не цивилизации, то что? Парадигмы мира после холодной войны. — "США: экономика, политика, идеология", 1994 N 4, с. 71-75. (If not civilizations, what? Paradigms of the Post-Cold War World.— "Foreign Affairs", November / December, 1993).

— Столкновение цивилизаций и что она может означать для России. — "Общественные науки и современность", 1995, N3, с. 133-136.

— Будущее демократического процесса: от экспансии к консолидации. (The Future of Democratic Development: From Expansion to Consolidation).— "Мировая экономика и международные отношения", 1995, N6, с. 87-94.

— Запад уникален, но не универсален. — ("Foreign Affairs", December, 1996), "Мировая экономика и международные отношения", 1997, N8, с. 84-93.

«Գլոբալ քաղաքակառուցությունը՝ դա քաղաքակրթությունների՝ քաղաքակառուցությունն է: Գերտերությունների մրցակցությունը վերաճում է քաղաքակրթությունների բախման: Առաջին անգամ պատմության մեջ,— արդարադուրս էլ Գերտերությունը,— գլոբալ քաղաքակառուցությունը դառնում է բազմաբևեռ և բազմաքաղաքակրթական»⁷: Եկատեմ, հարևանցիորեն, որ, ըստ Գերտերությունից, իրադրության բազմաբևեռայնությունը անկամխատեսելի է⁸: Այս տեսակետը Գերտերությունը դարձնում է եվակետային իր հայտնի մեծագրության մեջ: Գերտերությունը աշխարհում,— գրում է Գերտերությունը,— «լուրջ քաղաքակառուցությունը երեմիական քաղաքակառուցությունն է. գլոբալ քաղաքակառուցությունը դա քաղաքակրթությունների քաղաքակառուցությունն է: Գերտերությունների մրցակցությունը փոխարինվել է քաղաքակրթությունների բախումով»⁹: Ընդ որում, այդ նոր աշխարհում, Գերտերությունից կարծիքով, գլոբալ քաղաքակառուցության կենտրոնական ու ամենակատանգավոր տեսանկյունը դառնում է տարբեր քաղաքակրթությունների միջև կոնֆլիկտը¹⁰:

Գերտերությունը արժանագրում է, որ աշխարհն այլևս չի բաժանվում ազատ աշխարհի, երրորդ աշխարհի և կոմունիստական բլոկի, իսկ աշխարհի պարզ բաժանումը արդատ և հարուստ ժամբանների, կամ ժողովրդավարական և ոչ ժողովրդավարականի արդեն բավարար չէ: Արդյունավետ է և ճիշտ աշխարհի երկրների բաժանումը այս կամ այն քաղաքակրթությունների պատկանելու հատկանիշով: «Մակրոմակարդակում խստը գնում է,— բացատրում է Գերտերությունը,— քաղաքակրթությունների բախման մասին, իսկ միկրոմակարդակում՝ տարբեր քաղաքակրթությունների պատկանող պետությունների ու ժողովուրդների միջև հատկապես ցանկալի, տևական և դաժան կոնֆլիկտների մասին»¹¹: Իսկ պետություններն ավելի ու ավելի շատ են մտածում «քաղաքակրթությունների կատեգորիաներով» և այդ տեսանկյունով էլ,— եզրակացնում է Գերտերությունը,— որոշում **իրենց տեղն աշխարհում և իրենց շահերը**

⁷ «Քաղաքակրթությունը,— գրում է Գերտերությունը,— դա մարդկանց մշակութային ամենաբարձր ընդհանրությունն է և մշակութային նույնականացման ամենալայն մակարդակը, որանցից զատ՝ ինչը մարդուն տարբերում է մյուս կենսաբանական տեսակներից: Այն որոշվում է ինչպես առարկայական տարրերով, կրկնաչիք չեղան, պատմությունը, կրոնը, սովորույթները, սոցիալական հաստատությունները, այնպես էլ մարդկանց ենթակայական նույնականացումով» (Хантингтон С. Столкновение цивилизаций, էջ 51): «Քաղաքակրթությունը,— շեշտում է Գերտերությունը,— որի պատկանում է մարդը, ամենաբարձր աստիճանն է, որը բույլ է տալիս նրան հստակորեն նույնացնել իրեն» (Լույս տեղը, էջ 51): «Սովորաբար քաղաքակրթության տակ հասկացվում է քաղաքակառուցության, կրոնի, կրթության, արվեստի, փիլիսոփայության, տեխնոլոգիաների, նյութական բարեկեցության, և հավանաբար, բազմաթիվ այլ բաների ավելի բարձր մակարդակի բարդ խառնուրդ» (Լույս տեղը, էջ 52):

⁸ Хантингтон С. Столкновение цивилизаций и что она может означать для России. — «Общественные науки и современность», 1995, N3, стр. 134.

⁹ Sbu Хантингтон С., Столкновение цивилизаций, էջ 346.

¹⁰ Хантингтон С., Столкновение цивилизаций, էջ 24.

¹¹ Լույս տեղը, էջ 7:

¹² Хантингтон С. Если не цивилизации, то что? Парадигмы мира после холодной войны. — «США: экономика, политика, идеология», 1994, N 6, стр. 72.

(ընդգծումը իմն է. — Լ. Շ.): Սառը պատերազմին հաջորդող շրջանում,— ավելի էլ կոնկրետաճան Գերտերությունը,— պետություններն «իրենց շահերը ավելի շատ են որոշում քաղաքակրթության հաշվառումով»¹²: Գերտերությունը ցույց է տալիս նաև համաշխարհային զարգացման միտումը՝ հանգեցնել երկրաշագմակարության դուրսում սկզբունքային նշանակության եզրահանգման. պետականության հզորության աճը, որը գերաշխույթում էր կենսուտրուն, տեխնոլոգիական էր դեպի ոչ արևմտյան քաղաքակրթություններ: Գլոբալ քաղաքակառուցությունը դարձել է բազմաբևեռ և բազմաքաղաքակրթական¹³:

Եվ ընդհանրապես, իր հիպոթեզն ապացուցելու համար Գերտերությունը անդրադառնում է հիմնախնդրի տարբեր կողմերին և առաջ է քաշում նոր հիմնականություններ: Այսպես, օրինակ, նա գտնում է, որ համաշխարհային քաղաքակառուցությունը թևակոխում է նոր փուլ, երբ երկրների ու ժողովուրդների միջև կոնֆլիկտի հիմնարար աղբյուրը կտանվի ոչ թե զարգացման աստիճանային տարբերության բնագավառում, այլ «մշակութային դուրսում»¹⁴: Գլոբալ քաղաքակառուցության գլխավոր կոնֆլիկտները տեղի կունենան «տարբեր քաղաքակրթությունների երկրների ու ժողովուրդների միջև»: Քաղաքակրթությունների այդ բախումը կգերաշխույթ գլոբալ քաղաքակառուցության մեջ¹⁵: Գերտերությունը աշխարհում, բացառաբար է Գերտերությունը, նախկին հարցը «ՌՆ կողմն էր Գուլը» փոխարինվել է ավելի սկզբունքային հարցով. «ՌՎ եք Գուլը»: «Յետևապես,— գտնում է Գերտերությունը,— յուրաքանչյուր երկիր պետք է ունենա պատասխան: Այդ պատասխանը՝ երկրի մշակութային ինքնությունն է և որոշում է նրա տեղը համաշխարհային քաղաքակառուցության մեջ, նրա բարեկեցմանը ու թշնամիներին»¹⁶:

Եվ այսպես, իր առաջադրած քաղաքակրթական հայեցակարգի շրջանակներում լուծելով նաև մեթոդաբանական կարևորագույն խնդիրներ, Գերտերությունը հանգում է շատ ավելի առարկայական ու կոնկրետ կախատեսումներին: «Մտալակա տարիներին,— գրում է Գերտերությունը,— տեղական կոնֆլիկտները ամենահավանականն է, որ կվերաճեն խոշոր պատերազմների ինչպես Բոսնիայում, այնպես էլ Կոկալստում, երբ նրանք տեղի կունենան քաղաքակրթությունների բաժանման գծերում: Դա՞նոր համաշխարհային պատերազմ, եթե այդպիսին տեղի կունենա, կլինի պատերազմ քաղաքակրթությունների միջև»¹⁷:

Իսկ ընդհանրապես սահմանելով, որ քաղաքակրթությունը դա մարդկանց մշակութային ընդհանրության ամենաբարձր ծնն է և հատկանիշների ամենալայն տարրապատկերը (сnekтp), որոնք որոշում են ժողովրդի մշակութային ինքնությունը, կամխատեսում է, որ աշխարհի պատկերը ավելի ու ավելի մեծ չափերով կորոշվի յոթ կամ ութ գլխավոր քաղաքակրթություններով

¹³ Sbu նույն տեղը, էջ 73:

¹⁴ Хантингтон С. Столкновение цивилизаций, էջ 36.

¹⁵ Լույս տեղը, էջ 27:

¹⁶ Хантингтон С. Грядущее столкновение цивилизаций? — США: экономика, политика, идеология, 1994, թիվ 3, стр. 39.

¹⁷ Хантингтон С. Столкновение цивилизаций, էջ 186.

¹⁸ Хантингтон С. Грядущее столкновение цивилизаций?, էջ 39.

արևմտյան, կոնֆուցիական, ճապոնական, իսլամական, հինդու, սլավոնա-ուրալափառ, լատինաամերիկյան և, հնարավոր է, աֆրիկյան²⁰։ Ընդ որում, գտնում է Գանթինգթոնը, ամենաարյունոտ կոնֆլիկտները տեղի կունենան այդ մշակույթները բաժանող սահմանների երկայնությամբ²¹։ Այս եզրակացությունը, վերջին հաշվով, բխում է Գանթինգթոնի մշակութային կողմնորոշումից։ Նա պնդում է, որ նոր աշխարհում ամենամասշտաբային, կարևոր ու վտանգավոր կոնֆլիկտները տեղի կունենան... տարբեր մշակութային նույնականացման ժողովուրդների միջև²²։ Գանթինգթոնի մտադրացումով այստեղ կարևորագույն, կարելի է ասել առաջնահերթ դերը պատկանում է կրոնին։ Նա քանի որ կրոնը հանդիսանում է քաղաքակրթության հիմնական որոշիչ հավանաբար, «բեկման գծերի»²³ երկայնքով պատերազմները գրեթե միշտ տեղի են ունենում տարբեր քաղաքակրթությունների պատկանող մարդկանց միջև²⁴։

Գանթինգթոնը պնդում է, որ այն դեպքում, երբ համաշխարհային քաղաքականության գլոբալ կամ մակրոմակրոարդյուն է հիմնական բախումը տեղի է ունենում Արևմուտքի և մնացած աշխարհի միջև, լրկալ կամ միկրոմակրոարդյուն է այն տեղի է ունենում իսլամի և մյուս կրոնների միջև²⁵։ Ընդ որում, համաձայն Գանթինգթոնի, իսլամի սահմանները արյունոտ են։ Այդպիսին էլ հավանաբար դրանք դեռևս կմնան²⁶։

Գանթինգթոնը իր հազմավարական նախագծերին միս ու արյուն տալու նպատակով, ինչպես մեզ է թվում, կիրառում է նաև ենթաքաղաքակրթությունների հասկացությունը։ «Քաղաքակրթությունները, ակնհայտ է, միասնացվում են և մասնակիորեն համընկնում։ Նրանք,— պարզաբանում է Գանթինգթոնը,— կարող են ընդգրկել ենթաքաղաքակրթություններ։ Արևմտյան քաղաքակրթությունն ունի երկու հիմնական տարրերակներ՝ եվրոպական և հյուսիսամերիկյան, իսկ իսլամը²⁷ ստորաբաժանվում է արաբականի, թյուրքականի և մալայականի։ Եվ թեև ուղեցնում է արանց միջև սահմանները հազվադեպ դեպ-

²⁰ Մենագրության մեջ քաղաքակրթություններ ներկայացված են հետևյալ ճշգրտումներով ու ներթափանցությամբ. չինական (սին), ճապոնական, հինդու, իսլամական, ուղղափառ, արևմտյան, լատինաամերիկյան, աֆրիկական (հնարավոր է) քաղաքակրթություններ (Տե՛ս Խանտինգտոն С. Столкновение цивилизаций, էջ 54–60)։ Մենք հետախույս կառաջնորդվենք այս շարադրանքով։

²¹ Նույն տեղը։

²² Խանտինգտոն С., Столкновение цивилизаций, стр. 24.

²³ **Բեկման գիծ**— տարբեր քաղաքակրթությունների պատկանող հարևան պետությունների, միևնույն պետության մեջ տարբեր քաղաքակրթություններից խմբերի միջև գիծը։

²⁴ Նույն տեղը, էջ 410։

²⁵ Նույն տեղը, էջ 413։

²⁶ Խանտինգտոն С. Столкновение цивилизаций и что она может означать для России. — «Общественные науки и современность», 1995, № 3, стр. 135.

²⁷ Մենագրության մեջ իսլամի քաղաքակրթության մեջ Գանթինգթոնն ավելացնում է պարսկական ենթաքաղաքակրթությունը։ Նա գրում է «Իսլամի ներսում գոյություն ունեն թաճարակ առանձին մշակույթներ և ենթաքաղաքակրթություններ, ներառյալ պարսկալանը, բյուրքականը, պարսկալանը և մալայալանը» (Խանտինգտոն С. Столкновение цивилизаций, стр. 56)։

քերում են լինում հստակ, այդ քաղաքակրթությունները իրական են։ Նրանք ունեն վերելքներ ու անկումներ. նրանք բաժանվում են և միախառնվում։ Ու, ինչպես հայտնի է, պատմությունը յուրաքանչյուր իմացողին, քաղաքակրթությունները ջքանում են²⁸։

Գանթինգթոնը դիմելով **առանցքային պետություն**²⁹ հասկացությանը, ուրվագծում է հիմնական քաղաքակրթությունների, այդ թվում նաև ուղղափառ քաղաքակրթության շրջանակները։ Վերջինիս մեջ էլ, մասնավորապես, տեղավորում է Դայաստանը.— գրում է Գանթինգթոնը.— մնում է համաշխարհային քաղաքակրթության առանցքային երկրներից մեկը, որը նույնականացնում է ուղղափառ քաղաքակրթության հետ։ Առ այսօր այդ քաղաքակրթության մեջ մտնում են նաև այնպիսի ուղղափառ սլավոնական պետություններ, ինչպիսիք են Բելոռուսիան, Բուլղարիան, Մակեդոնիան և Սերբիան. այնպիսի ուղղափառ ոչ սլավոնական պետություններ, ինչպիսիք են Վրաստանը, Դայաստանը և Ռումինիան, և խաղը բնակչությանը ինչպես ուղղափառ, այնպես էլ ոչ ուղղափառ երկրներ, այնպիսիները, ինչպիսիք են Ուկրաինան և Դաճախստանը։ Որպես առանցքային պետություն Ռուսաստանը կրում է հիմնական պատասխանատվություն ուղղափառ պետությունների ու երկրների շրջանում կարգի ու կայունության պահպանման համար³⁰։

Ավելորդ չենք համարում մեջբերում անել նաև մենագրության համապատասխան հատվածից։ «Որոշ գիտնականներ,— հաղորդում է Գանթինգթոնը,— գատում են առանձին ուղղափառ քաղաքակրթության գոյությունը Ռուսաստան կենտրոնով, որը տարբերվում է արևմտյան քաղաքակրթությունից իր բյուզանդական արմատներով, բարթրական տիրապետության երկու հարյուր տարով, բյուրկրաստական ըմբակալության և նրա վրա Վերածնության, Ռեֆորմացիայի, Լուսավորչության և Արևմուտքում տեղի ունեցած նշանակալից այլ իրադարձությունների սահմանափակ ազդեցությամբ³¹։

Այս եզրակացություններին Գանթինգթոնը հանգում է, ընդհանուր առմամբ, այն չափորոշիչների կիրառմամբ, որոնք ընդթափանցում են մշակույթները, քաղաքակրթությունները։ Արաղիկ,— գրում է Գանթինգթոնը.— իրենց նույնականացնում են կրոնի, լեզվի, պատմության, արժեքների ծագումով, սովորույթներով և հաստատություններով։ Նրանք իրենց նույնականացնում են մշակութային խմբերով. գեղերով, էթնիկական խմբերով, կրոնական համայնքներով, ազգերով և ամենալայն մակարդակով քաղաքակրթություններ-

²⁸ Խանտինգտոն С. Грядущее столкновение цивилизаций, стр. 39.

²⁹ Առանցքային պետություն. — քաղաքակրթություններում սովորաբար կան մի կամ ավելի տեղեր, որոնք նրա անբաժանելի կողմից դիտվում են այդ քաղաքակրթության մշակույթի հիմնական արդյուր կամ արդյունքներ։ Մովորաբար այդպիսի արդյունքներ տեղավորված են մի առանցքային երկրում կամ քաղաքակրթությունների երկրներում, այսինքն՝ մշակութային առումով ամենազոր և կենտրոնական երկրում կամ երկրներում (Խանտինգտոն С. Столкновение цивилизаций, էջ 203)։

³⁰ Խանտինգտոն С., Столкновение цивилизаций и что она может означать для России, стр. 135.

³¹ Խանտինգտոն С., Столкновение цивилизаций, стр. 57.

3567

րով²¹: Ընդ որում, համաձայն Հանքինգզոնի, զալիքում երկրները կխնայվորվեն մշակույթի և քաղաքակրթության հատկանիշներով, հասկանալով հատկապես, որ «քաղաքակրթությունների միջև տարբերությունները չպահպանեն խորն են, նրանք կապված են պատմությանը, լեզվով, մշակույթով, ավանդույթներով և, ամենազլխավորը, կրոնով: Քաղաքակրթություններն ունեն տարբեր տեսակետներ Աստուծո և մարդու, քաղաքացու և պետության, ծնողների և զավակների, ազատության և իշխանության, հավասարության և ստորակարգության հարաբերությունների մասին: Այդ տարբերությունները հարյուրավակների արդյունքներ են: Նրանք կչբանան ոչ շուտ»²²:

Եզրակացնելով, որ ժամանակակից պայմաններում ոչ արևմտյան հասարակությունները (պետությունները) արդիականանում են, չարևմտականանալով և մեծացնում իրենց կարողականությունը, Հանքինգզոնը գրում է. «Համաշխարհային քաղաքականության կենտրոնական առանցքը, ամենից հավանական է, կլինի կոնֆլիկտը Արևմուտքի ու մնացածների միջև» (The West and The Rest) և ոչ արևմտյան քաղաքակրթությունների հակազդումը ուժեղ Արևմուտքին ու նրա արժեքներին»²³: «Աշխարհի քաղաքականության կենտրոնական առանցքը,— նկատում է մի այլ տեղ նույն Հանքինգզոնը,— «ստոր պատերազմից» հետո արևմտյան հզորության և քաղաքակրթության փոխհարաբերությունն է ոչ արևմտյան քաղաքակրթությունների հզորության ու քաղաքականության հետ»²⁴: Ուստի և Արևմուտքը հարկադրված կլինի ավելի շատ հարմարվել այդ ոչ արևմտյան ժամանակակից քաղաքակրթություններին, որոնց ուժը կմտնեն Արևմուտքի ուժին: «Դրա համար,— գտնում է Հանքինգզոնը,— պահանջվում է ավելի խոր հասու լինել մյուս քաղաքակրթությունների, կրոնների ու փիլիսոփայությունների, ինչպես նաև ժողովուրդների սովորույթների հիմքերին, ձգտել առանձնացնել արևմտյան ու մյուս քաղաքակրթությունների ընդհանրության տարրերը»²⁵: Միաժամանակ, Հանքինգզոնի իր համեմաշխտությունն ու հիմնավորմանը Արևմուտքը պետք է սովորի խորապես հասկանալ մյուս քաղաքակրթությունների կրոնական և փիլիսոփայական հիմքերը»²⁶:

Ավական պարզ է, որ ոչ միայն Արևմուտքը, այլ ցամակացած ժողովուրդ, կարիք ունի հասկանալու այլ քաղաքակրթությունների կրոնական ու փիլիսոփայական հիմքերը, պատկերացնի իր տեղը քաղաքակրթությունների հանքինգզոնյան սանդղակում, քանզի այն առավելապես երկրաքաղաքական

հայեցակարգ է: Օրինակ՝ ռուս հետազոտող Սերգեյ Պերեսլեգինը գտնում է, որ Հանքինգզոնի աշխատանքը քելուզն ունի գիտական աշխատանքի որոշ զօծեր և հրապարակախոսության բոլոր «ազգակցական հատկանիշները», այդուհանդերձ այն պետք է վերազրվի «ոսպմավարության» բնագավախին: «Ըստ էության,— գրում է նա,— խոսքը իր սահմաններից դուրս ռազմաքաղաքական պլանավորման մասին է, երբ պետությունը/ընտոսը խաղում է նվազագույն մարտավարական միավորի դեր»²⁷: Թերևս ճանաչողության տվյալ խնդիրը հրատապ է առաջին հերթին այն ժողովուրդների համար, որոնք ստանում են քաղաքակրթությունների, հանքինգզոնյան բնորոշմանը, «բեկնան գծում»:

Այնքոն է, որ դրանցից է և հայ ժողովուրդը, որի հայրենիքը Հայաստանը (Հայկական լեռնաշխարհը), գտնվում է քաղաքակրթությունների հանդիպման խայներում: Միա թե ինչու է ռուստապ Հանքինգզոնի հայեցակարգում «հայկական թրթածրարի» ճշգրտումը որպես ռազմավարական խնդիր դիտելը:

Բ. ՄԻԱԲԵԿՎԻԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՄ ԵՆ ԱՆՈՒՄ ԵՆ ԱՆՈՒՄ ԵՆ ԱՆՈՒՄ

Հայտնի է, որ ուղղափառություն լինելով քրիստոնեության երեք ուղղություններից՝ կաթոլիկության և բողոքականության հետ միասին, մեկը, բնութագրում է տեղական ինքնավար, ազգային եկեղեցիներին կամ արևելաքրիստոնեության երևու խոշոր ընտանիքներն: Արևելյան ուղղափառ եկեղեցիներ (Հայաստանյայց առաքելական եկեղեցի, Ասորի ուղղափառ եկեղեցի, Եթովպական ուղղափառ եկեղեցի, Ղաչի ուղղափառ եկեղեցի, Հնդկաստանի Մալաբար առտական ուղղափառ եկեղեցի) և Ուղղափառ (օրթոդոքս) կամ երկաքնակ (քաղկեդոնիկ) եկեղեցիներ: Վերջիններս կոչվում են նաև հունարական, քանի որ ծագում են հույն կամ բյուզանդական եկեղեցուց, ունեն նույն եկեղեցական ավանդությունը, արարողակարգը և համայնման կամոնական կառույց: Ուղղափառ (օրթոդոքս) եկեղեցիներն այսօր չնայած իրենց մեք պարզակում են ազգային ավանդույթներ, լեզուներ և յուրախատկություններ, սակայն նրանք բոլորն էլ ունեն միևնույն պատմական սկզբը, այն է՝ բյուզանդական ուղղափառ քրիստոնեությունը:

Նրանք կազմավորվել են IX–XI դարերում որպես ավտոկեֆալ (ինքնազուխ) երկարքնակ եկեղեցիներ, միավորվում են Ուղղափառ (Արևելյան երկարքնակ) եկեղեցիներ անվան տակ: (Կրոս եկեղեցին կազմավորվել էր ավելի վաղ, սակայն 608 թվականին անջատվեք Հայաստանյայց եկեղեցուց և դավանանքի ճանապարհով սկսեք մերժենալ Հայրազանդիային): Ուղղափառ երկարքնակ եկեղեցին ընդունում է յոթ ժողովների տիեզերական հեղինակությունը և նրանք վարդապետական սահմանումները, իսկ Կաթոլիկ եկեղեցին քամ: Այս երկու ուղղություններն էլ ընդունում են Քրիստոսի մեք երկու բնու-

²¹ Նույն տեղը, տր. 133.

²² Хантингтон С., Грядущее столкновение цивилизаций?, стр. 39.

²³ Хантингтон С., Грядущее столкновение цивилизаций?, стр. 39.

²⁴ Хантингтон С., Столкновение цивилизаций, стр. 26.

²⁵ Хантингтон С., Грядущее столкновение цивилизаций?, стр. 41.

²⁶ Хантингтон С., Если не цивилизации, то что?, стр. 75.

²⁷ Переслегин С., После слово. О спектроскопии цивилизаций, или Россия на геополитической карте мира. — Хантингтон С., Столкновение цивилизаций, стр. 579.

բյունները՝ Աստվածայինն ու մարդկայինը, որոնք գոյություն ունեն «անբաժան ու անխառն»։ Երկարնակությունը Քրիստոսի մեջ հստակ սահմանագատելով աստվածայինն ու մարդկայինը, դրանով իսկ բացառում էր մարդկայինի աստվածացման հնարավորությունը, ուստի աստված մնում է լոկ որպես պաշտամունքի առարկա, սակայն և մյուս կողմից մարդուն ցույց է տրվում իր տեղը, սահմանվում նրա իրավասության շրջանակները³⁵։ Իսկ ընդհանրապես, սոսկ պատմական իրողությունն է արժանագրում Քարեզին Բ Չայոց կաթողիկոսը, երբ գրում է, որ եթե «Բյուզանդական եկեղեցին Արևելքի արևմտյան մասում հանդիսացավ **Մայր եկեղեցի** իր բնից շատավիճած **օրորոքը** եկեղեցիների մեջ, Արևելքի արևելյան մասում (Փոքր Ասիո հարավարևելյան շրջանում) Չայոց եկեղեցին ունեցավ նույն դիրքը և կատարեց նույն կենտրոնական հաստատության հատուկ դերը Արևելյան եկեղեցիների կյանքում»³⁶։

Եվ Չայաստանյայց առաքելական եկեղեցին պաշտպանելով իր հոգևոր անկախությունը, որն, ի դեպ, հիմնադրվել է բյուզանդականից ավելի վաղ ու Քաղկեդոնից (451 թ.) հետո նրա հակառակորդն է եղել, այդ ժողովից սկսած չի ճանաչել Տիեզերական հետագա ժողովների որոշումները, ընդունել է **միաբնակությունը**³⁷ որը պաշտպանում է Քրիստոսի որպես Աստուծո միասնական քննությունը։ Չայ եկեղեցու քրիստոսաբանական վարդապետությունը պաշտպանելով միաբնակություն, Քրիստոսի մեջ աստվածային կողմն առիասարակ ավելի է շեշտում, սակայն «մի քնություն» ասելով միայն աստվածայինը չի հսականում և մարդկայինը անտեսում։

«Քրիստոս,— բանաձևում է Գովհաննես Օ Չձնեցի կաթողիկոսը,— ոչ է սոսկ մարդ, քայց և ոչ Աստված մերկ, այլ մանավանդ Աստված և մարդ միանգամայն»։ Եվ ընդունելով աստվածայինն և մարդկայինն միասնություն, միաբնակ եկեղեցին մարդու մեջ արքայացնում է իր ուժերի ու կարողությունների հանդեպ վստահություն, աստվածայինն հասնելու հույս և դրան ձգտելու ցանկություն, կամք ու գործունեություն։ Եվ աստվածացնում է մարդուն։

Չայ եկեղեցու կողմից «միաբնակությունը» ընտրությունը, գտնում է ռուս գրող, թարգմանիչ և գիտնական Վ. Միկուշնիչը, իր ազդեցությունն ունեցավ հայկական մշակույթի անրկնելի հատկանշների վրա։ «Չայաստանը,— ընդդիմարացնում է Միկուշնիչը,— ոչ միայն չի պարփակվել իր եկեղեցական մեկուսացվածության մեջ, այլև, ընդհակառակը, գրտորել է **ստեղծագործական ձգտումների հիրավի տիեզերական լայնություն** (ընդգծումը ինձն է.— Լ. Ե.) յուրովի արձագանքելով այն բոլոր հոգևոր միտումներ-

ին, որոնք այն ժամանակ տարածվում էին Գոդկաստանից մինչև Պիրենեյան թերակղզի»³⁸։

Անդրադառնալով այդ հաստատումներին։

Քննվող հիմնախնդիրների շրջանակներում որոշակի ապացուցողական նշանակություն են ձեռք բերում Ֆրիտյոֆ Նանսենի դիտարկումները Կիլիկյան Չայաստանի, հայ եկեղեցու (նրա դավանանքի) և առանձնապես համաշխարհային ճարտարապետության հետ հայկական աղերսների վերաբերյալ։ Կիլիկիան,— գրում է Ֆ. Նանսենը,— «երեք հարյուրամյակ, շրջապատված թշնամիներով, կարողանում է պահպանել իր անկախությունը թուրքերի անող ուժերի և Բյուզանդիայի ուսնձգությունից։ Գունա-բյուզանդական և հռոմեական եկեղեցիների սիրաշահումներն ու սպառնալիքներն անհետևանք են մնում նաև Կիլիկիայի հայերի համար։ Նրանք ևս (ինչպես Մեծ Չայաստանում.— Լ. Ե.) հավատարիմ մնացին իրենց միաբնակ դավանանքին ու պահպանեցին իրենց եկեղեցին»³⁹։ Եվ կարծես թե քննվող հիմնախնդիրը նկատյի ունի մշակույթի փիլիսոփայության լավագույն գիտակ, ակադեմիկոս Գ. Ա. Գևորգյանը, երբ գրում է, որ երկրորդ հազարամյակի սկզբներին Չայաստանը եղավ «այն սակավաթիվ երկրներից մեկը, որը պահպանեց անտիկ մշակույթը և իրականացրեց նրա յուրահատուկ համադրումը քրիստոնեության հետ» և ունենալով «նույն հիմքը՝ անտիկ մշակույթի հետ քրիստոնեության համադրումը, հայկական մշակույթը իրեն ծավալեց եվրոպական բաղադրությունը համահունչ մշակութային մեծերի ամբողջ բազմազանության մեջ «...», ինչպես նաև համրային կյանքի կազմակերպման իրավական ու պետականության մեծերի մեջ (հիշենք թեկուզ, թե ինչ ներդրանակ կերպով Կիլիկյան Չայաստանը մտավ Եվրոպական ազգերի համաշխարհի մեջ)»⁴⁰։ Ասվածի լույսի տակ ավելի հավաստի ու տարողունակ է այն պնդումը, թե հայ ժողովուրդի «ինքնուստիպ զարգացման ընթացքն իր եական ազդեցությունն է թողել ոչ միայն բյուզանդական, այլև արևմտաեվրոպական մշակույթի վրա»⁴¹, որ, մասնավորապես, «գործական ոճը, որ ինքնազարդի համաշխարհային մշակույթի նշանակալից նվաճումներից է, իր սկզբնավորման շրջանում որոշակի ազդեցություն է կրել» հայկական մշակույթից⁴²։

³⁵ Микшевич В. Целительный свет (Поэма Гр. Нарекаци "Книга скорбных песнопений"), «Ранние тексты и фундаментальные», 1981, рпд 3, էջ 62։
³⁶ Նանսեն Ֆ., Խարված ժողովուրդը. Ազգերի ընկերակցության գլխավոր հանձնակատարի հետազոտական ճանապարհորդությունը Վրաստան և Չայաստան (թարգմ. գերմ.), Եր., 2002, էջ 223։

³⁷ Տե՛ս Գևորգյան Գ. Ա. Քրիստոնեության ընդունումը Չայաստանում պատմության փիլիսոփայության տեսանկյունից, «Չայական քառակ», 2001, թիվ 1-2, էջ 20-21։

³⁸ Նանսեն Ֆ., Խարված ժողովուրդը, էջ 229։

³⁹ Նույն տեղը, էջ 234։

³⁵ Գնագնամորեն տե՛ս Միրզոյան Գր., Կրոնադավանաբանական ապաքարը և հայ փիլիսոփայական միտքը.— Չայ իմաստասիրությունը հոգևոր մշակույթի համալսարանում. Չայ փիլիսոփայության պատմության մեթոդաբանական հարցերը (պատ. խմբ. Վ. Ա. Արևշատյան։ Եր., 1992, էջ 69-81)։

³⁶ Քարեզին Բ Կաթողիկոս, Չայաստանյայց եկեղեցին իր «ժառայական կերպ»-ին մեջ, ԼՂԵԻԽԱՍ, 1994, էջ 157։

9. ԿԻԼԻԿԻԱՆ ՈՐՊԵՆ ԵՎՐՈՊԱՆ-ԱՄԻՎԱԿԱՆ ՊՍԱՌԻՅԱՆ

Չայ ժողովրդի քաղաքակրթական «պատկանելության» հարցի լուսարան-ման տեսակետից հուլիս կարևոր է թվում Կիլիկյան Չայաստանի (1199–1375) պատմական դերի գնահատականը և նրա տեղի պարզաբանումը, որն, ինչ խոսք, երկուսն էլ թողել հայրցի հոգևոր մշակութային զարգացման վրա: Չայաստան է, որ միջնադարում Միջերկրական ծովի արևելյան ափերին Արևելքի հետ Արևմուտքի տարանցիկ առևտուրն ու տնտեսական շփումը (ինչու է Չայ հողերը հաղորդակցությունը) տեղի էին ունենում այսպես կոչված Փոքր Ասիաստանի՝ Կիլիկիայի տերիտորիայում⁵¹: Այսպես, որ Կիլիկիայի հայկական պետությունը 11–րդ դարից սկսած սերտ հարաբերություններ է ունեցել իսլամականության հետ: Չայաստանի և Արևմտյան Եվրոպայի հետ: Հռոմի Գրիգոր Գ պապն իր Ելեւսիա Րոմանա կոնդակի մեջ (1384 թ.) ասում է. «Երբ ժամանակավ ըրիստոնյա իշխաններն ու քանակները կերթան Սուրբ Երկիրը վերադարձելու, ոչ մեկ ազգ, ոչ մեկ ժողովուրդ այնչափ շուտափույթ ետանդով օգնության կհասնի մարդով, սնունդով, ծիծերով, խորհուրդներով, որչափ հայկերը. ամենը, իրենց թուր ուժերով, ամենամեծ քաջագործությամբ և հավատարմությամբ օգնած են ըրիստոնյաներուն՝ այդ սուրբ պատերազմին մեջ»⁵²:

Բնականաբար, Կիլիկիայի հայկական պետությունը զերծ չէր Եվրոպական ազդեցությունից: Այսպես հատկապես Լևոն Բ-ի շրջանից Կիլիկիայի տնտեսական կապերը Եվրոպական երկրների հետ ուժեղացան: «Պետության քաղաքական կազմակերպությունը... զրուս է Վ. Ս. Քյուրքճյանը, — վարչական և այլ պաշտոնաբանները, ինչպես նաև արքունի դարպասը, եվրոպական սկի համեմատ ձևակերպվեցան: Չայ և Եվրոպայի իշխանական ընտանիքներն միջև ամուսնական խնամիրություններ բազմացան, և տեղացի կղերի ու լատին կրոնավորներու ձեռքով շատ մեղ ուսումնականորե հաստատվեցան»⁵³: Անիրագվել մարդու և կ զարմանալի թվալ, սակայն իրողությունն այն է, որ Եվրոպայի հետ Չայաստանի, տվյալ դեպքում Կիլիկիայի, հարաբերությունները իրականացել են ակտիվ փոխազդեցության պայմաններում: Չայաստանի պատմաբան Ռենե Գրոսսեն (Rene' Grousset) հարողորս է, որ իսլամափոխների և Կիլիկիայի «միջև միաբանությունը անմիջական եղավ և տևական. հարաբերությունները իսրայելացիները հավասարության վրա: Իշխանական կապակցությունները եղան անընդմեջ: 10–րդ դարի Լատին Արևելքը իրականության մեջ եղավ ֆրանսա-հայկական (Franco-Arme'nien) մի Արևելք»⁵⁴: Մի այլ հեղինակ, Փոլ դը Վյուն (Paul de Ve'ou) անդրադառնալով դեպի Բրիտանիայի գերեզման իսլամական հարավներին հայերի օժանդակությանը, ուղղա-

կիրեն զրուս է. «Չայաստանը Ֆրանսիայի կնքամայրն է (marraine) Ասիայում»⁵⁵: Այս այս գործընթացներն են հայ գիտնականին համագեղել այն եզրակացությունը, թե Կիլիկիայի ընդհանուր զարգացումը տեղի էր ունենում իսլամական ազդեցությունների պայմաններում⁵⁶:

Այնպես է, որ այդպիսի «խաչածվող ազդեցություններ» օգտին է գործել հայ վաճառականական դասը, հատկապես XV–XVIII դարերում: Աս, ըստ էության, ստանձնել է Արևելքի ու Արևմուտքի կապող օղակի գործառույթը: Այդ դասը, կատարում է Ֆերնան Բրոդելը, իր ձեռքն էր վերցրել Եվրոպայից դեպի Օսմանյան կայսրություն առեռիկ արարանքահոսքի վրա գերիշխանությունը: Այդ սալլերի քարավանների պետերը, քարավան բաշխերը, միշտ հայեր էին կրում: «Այս բեռնավորապարունների հոսքը չէ միավորել արդո՞ք մեկ ամբողջության մեջ ներկա հսկա ապարեզները ոչ ավել, ոչ պակաս, Արևելքը և Արևմուտքը...»⁵⁷ հարցնելով հաստատում է Բրոդելը:

9. ՄՆԻԾԱՐՅԱՆՆԵՐԸ ՈՐՊԵՆ ՉՊԵՎՈՐ (ԵՎՐՈՊԱՆ) ԿԱՄՈՒՐ

Չայաստանը նաև, որ հայ ժողովրդի հողերը-մշակութային կապը Եվրոպայի հետ 18–րդ դարից սկսած ավել է սերտանում հայտնի Միսիթարյանների սկզբից Մանուկ Միսիթար վանականի հիմնած միաբանության ջանքերով, որը և շարունակվում է ցայսօր: Սկզբում Միսիթարն իր համախոհներով գործում էր Կ.Պոլսում, ապա Մոնթալյան: 1715 թվականին նրանք գնում են Վենետիկ, հաստատվում Մուրը Ղազար կղզում և այնտեղ կառուցում մի փառահեղ վանք: 1712 թվականից Միսիթարյանները ընդունում են լատին եկեղեցու հովանավորությունը, որը սակայն չի խանգարում նրանց պահպանել կապը հայ ժողովրդի հետ: Միսիթարյանների թեղուն գործունեությունը խթանեց հայ մշակույթի, ազգային մտածելակերպի և ինքնաճանաչման վերածնունդը: Միաժամանակ, նրանց կատարած քարոզարվեստ թարգմանությունների շնորհիվ հայոց համար հաստ է դառնում արևմտաեվրոպական քնարերգությունը, գիտությունն ու մշակույթը: Եվ փոխադարձաբար:

Այսպիսով պատմական իրողությունները և նույնիսկ նրանց հակիրճ վերլուծությունը ապացուցում են, որ ճիշտ չէ հայ ժողովրդին, հետևապես, և Չայաստանը տեղավորելը «ուղղափառ-սլավոնական քաղաքակրթության» սանդղակում: Դա հակասում է ինչպես պատմական փաստերին, այնպես էլ

⁵¹ Այդ մասին տես՝ Марко Поло. Путешествие. Пер. со старорус., Л., 1940, էջ 17:

⁵² Տես՝ Մորգան ժազ դը, Չայ ժողովրդի պատմությունը. Իր պատմությանը ամենատուրջ ժամանակներն մինչև մեր օրերը: Թարգմ. Ֆր., Պոսքեն, 1947, էջ 304:

⁵³ Քյուրքճյան Վ. Ս., Հայկական Կիլիկիա, Երև. Յոթը, 1919, էջ 13:

⁵⁴ Տես՝ Գարեգին Բ Կարողիկոս, Չայաստանյայց եկեղեցին իր «ժառայական կերպի» մեջ, էջ 151):

⁵⁵ Լույս տեղը, էջ 152:

⁵⁶ Տես՝ Գարեգին Չ., Չայ փիլիսոփայական մտքի պատմություն. Ի. Բ, Երև., 1958, էջ 110:

⁵⁷ Бродель Ф., Материальная цивилизация, экономика и капитализм XV–XVIII вв., Пер. с.фр., т. 2, М., 1988, стр. 146.

հայոց մշակութային—քաղաքակրթական ինքնությանը: Եվ նա, անենայն վստահությամբ, արևելաքրիստոնեական քաղաքակրթության ուրույն ճյուղերից մեկն է, ինչը պակասում է Դանթեինգոթնի սանդղակում:

7. 9. — Արևմտյան քաղաքակրթական սահմանումների մեջ ինքը՝ Դանթեինգոթնը ցուցաբերում է պատմական մոտեցում, և այդ տեսակետից պատմականորեն է գնահատում Կաթոլիկ եկեղեցու տարածքը արևմտյան քաղաքակրթության առաջացման և զարգացման ընթացքի մեջ: Սակայն, բուն արևմտյան քաղաքակրթության բնորոշման համար այդ հատկանիշները չէ որ նրա հայեցակարգում դասնում են եսկան:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՈԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԸ

Ազգի հարստությունը կախված է բազմաթիվ պատճառներից և ոչ միայն նյութական, այլև հոգևոր բնույթի... ազգային հզորությունից, աշխարհագրական դիրքից, քաղաքական ու քաղաքացիական հաստատություններից, օրենքներից, կրոնից, բարոյականությունից և այլն:

«Կիտոս»

Դայաստանի Դանրպետության թե՛ ներքին կառուցվածքը, թե՛ արտաքին քաղաքականությունը կրում են երեք հիմնական գործոնի ազդեցությունը. ա) ԴԴ (+ ԼԴԴ) աշխարհագրական որոշակի տեսաբանականությունը (Դայական լեռնաշխարհի հյուսիսարևելյան մասն է),

բ) հայկական քաղաքակրթության առանձնահատկությունները (արևմտյան քաղաքակրթության անբաժան մասն է և այն ներկայացնում է Արևելքում, քաղաքակրթությունների հանդիպման դինամիկ գոտի է),

գ) հայ ժողովրդի արդի կեցությունը (աշխարհասփյուռ է և նրա կեանք պակաս մասն է ապրում հայկական պետական կազմավորումներում):

Թվարկվածներից յուրաքանչյուրը, մասնավորապես առաջինը, որ աշխարհագրական դետերմինիզմի դրսևորման դասական օրինակ է, իր ազդեցությամբ պայմանավորում է պետական կազմավորումների առկա փնտևը.

թելադրում նրանց առաջընթացի ռազմավարական նպատակները՝ ուժեղ պետություն և սոցիալապես ուղղորդված տնտեսական համակարգ:

Բնական է, որ երկրաքաղաքական տեղաշարժերի գոտում գտնվող երկիրն իր սահմանափակ պաշարներով չի կարող հավակնել տարածաշրջանային գերտերության կարգավիճակին, սակայն համաշխարհային զարգացման փորձի և ազգային ինքնատիպության համադրման միջոցով կարող է ձգտել զարգացման տարածաշրջանային օրենսդրի դերին: Ուրեմն, խնդիրը ռազմավարական նպատակների ճիշտ ընտրությունն է: Իսկ ռազմավարությունը, նշում էր հայտնի Ֆոն Կլաուզիցը, չի կարող բանական հիմք ունենալ, քանի որն չի կատարվել իր հետևանքում նպատակի գիտակցման վրա: Դեռուզ է, որ ընտրությունը պետք է ենթարկվի որոշակի պահանջների, այն է՝ պետական կանոնացր պետք է բավարարի ժողովրդի կազմակերպման լավագույն տարրերակին և ստեղծի մեր ժողովրդի կարողությունների դրսևորման պայմաններ, մոտ լինի նրա ինքնատիպությանը:

Որպես այդպիսին, մեր կարծիքով, հանդես է գալիս «կարգի տեսություն» հիման վրա մշակված և Արևմտյան եվրոպայում, հատկապես Գերմանիայում, իրականություն դարձած «սոցիալական շուկայական տնտեսակարգը»:

ԽՍՀՄ լուծարմանը զուգընթաց, «ժողովրդավարություն» և «ազատականություն» կարգախոսներով տեղի էր ունենում զարգափարական ներթափանցում եսխորհրդային տարածք: Այն իրականանում էր կոմունիզմի դեմ պայքարի գրավիչ դրոշով և ուներ հստակ արտահայտված հակասոցիալիստական բունկարակություն:

Միջազգային իրադրության տեսանկյունից ժամանակը ճիշտ էր ընտրված, քանզի ներթափանցումը տեղի էր ունենում՝

ա) Արևելյան դաշինքի գաժալված փլուզման և խորհրդային բռնատիրությունից ժողովրդներին ազատարձան անկասելի մղման պայմաններում:

բ) խորհրդային Միության քայքայումը և Արևելյան եվրոպայում «թավալա հեղափոխությունները» տեղի էին ունենում պահպանողական արժեքների վերելքի հերթական շրջափուլի ուղեկցությամբ, սոցիալական շարժման ու սոցիալիստական զարգափարախոսության նահանջի, սոցիալ—տնտեսական ուժեղ ավանդույթներ ունեցող երկրներում (Ֆրանսիա, Գերմանիա և այլն), սոցիալիստների դիրքերի զգալի թուլացման պայմաններում:

Կոմունիզմի տեսությունն ու պրակտիկան ներկայացվում էին միակ սոցիալիստականը: Դժբաճա խեղաթյուրվում էին կոմունիզմի և սոցիալիստական զարգափարախոսության միջև գոյություն ունեցող պատմափիլիսոփայական տարածայնությունների, քաղաքական ընդունումների, ներքաղաքական գործելակերպի տարբերությունները: Որպես ծախսեր համահարժեցման էին ենթարկվում սոցիալիստները, սոցիալ—դեմոկրատները, կոմունիստները:

Անդրադարձավ սոցիալիստական շարժման շուրջ 1,5—դարյա պատմությանը՝ կնկատենք, որ սոցիալիստական զարգացումը, անցնելով հեղափոխական մարքսիզմի փուլը, թեքվել է հիմնականում քարեշրջական (ռեֆորմիստական) ռազմավարություն դարձաբերվող սոցիալիզմը դիտել որպես որոշակի մո-

¹ Витте С.Ю., По поводу национализма, Национальная экономика и Фридрих Лист, II изд., СПб, 1912, с. 51—52.

ղել իրեն հատուկ հատկանիշներով և հակվել այն տեսակետին, որ գոյություն ունեցող կարգերի շրջանակում ժողովրդավարության պայմաններում և ժողովրդավարական մեթոդներով, անհրաժեշտ և կատարելագործել հասարակական հարաբերությունները:

Նրանք, ովքեր մերժում էին այդպիսի մոտեցումը, սոցիալ-դեմոկրատիայից դուրս եկան, հատկապես Առաջին աշխարհամարտից հետո, և ստեղծեցին կոմունիստական կուսակցություններ: Իսկ ովքեր համարում էին, որ կարելի է գնալ դեպի սոցիալիզմ՝ որպես ինչ-որ մոդել, սակայն հիմնականում խաղաղ, բարեշրջական մեթոդներով, զերադասեցին իրենց անվանել սոցիալիստներ: Սրանց մեջ առաջին հերթին պետք է նկատի ունենալ Ֆրանսիայի սոցիալիստներին:

Սակայն վերջին տարիներին սոցիալիստների ու սոցիալ-դեմոկրատների միջև գոյություն ունեցող տարբերությունները ջնջվում են: Նրանք բոլորը բեքվում են դեպի սոցիալ-լիբերալ պատճառներ: Հասկանալի է, որ գրեթե բոլորը էլ միևնույն դիրքերում են՝ ժողովրդավարություն, սոցիալական պետություն, գործունեության բարեշրջական մեթոդներ, կողմնորոշում հասարակական հարաբերությունների հումանիզացիային:

Նույնիսկ եվրոպական կոմունիստական կուսակցությունները, ըստ էության, անճշտ վերապահումներով, ընդունեցին խորհրդարանական ժողովրդավարության սկզբունքները և լեյսյան համաձայնեցին սոցիալական շուկայական տնտեսության իրողություններին: Իսկ եվրոպական սոցիալ-դեմոկրատները, հարձարվելով արդյունաբերական երկրների նոր զարգացումներին, հաշվի առնելով արագ փոփոխվող պայմանները, շրջվում են դեպի սոցիալական ազատականության դիրքեր՝ XX դարի վերջին տասնամյակի երկրորդ կեսերին քաղաքական իշխանության այրուղու մոդել վերադարձնում կորցրածը:

Սոցիալիստական շարժման դասական դիրքինը՝ եվրոպան, XXI դար քնակոխեց սոցիալ-դեմոկրատական «կողմնորոշում»՝ ունեցող երկրների (Ֆրանսիա, Անգլիա, Գերմանիա) գլխավորությամբ: Եվրախորհրդարանում Սոցիալեմբերո ունի պատգամավորական խոշորագույն խմբակցությունը, որի անդամները քվեարկում են հավաքական կարգապահության սկզբունքով:

Եթե նկատի ունենանք ԳՀ տնտեսատեսիսիկական ընդհանուր քայքայվածությունը, ուրեմն և աշխատավորական շարժման գրեթե իսպառ քայքայությունը, ԳՀ ներքին զարգացումը պահանջում է քաղաքական պայքարի գործելանքի ճիշտ ընտրություն:

Նորանկախ Հայաստանի բազմաթիվ ու բազմաբնույթ ղեկավարությունների պատճառների թվում առաջինը, բերնա, տնտեսական հարաբերությունների ուղուտում արձատական հեղաշրջումն էր: Մինչդեռ տնտեսական հարաբերությունների ուղուտն էր, առաջին հերթին, պահանջում ժողովրդական բարեփոխումների քաղաքականություն և հանրապետության զարգացման հստակ հայեցակարգ:

Որպես արդյունք՝ ստեղծվեց մենաշնորհայնացված հասարակություն, որը նույնիսկ չի նպաստում «արդյունաբերական ազգային բուրժուազիայի» կայացմանը:

Ստեղծված կացությունը, այդուհանդերձ, ուղղել հնարավոր է, քեկուզ մեծազույն կրուտսներին և կործան տարիների վնասի մասնակի փոխատուցումով: Միայն անհրաժեշտ է առաջացած «հակահամակարգ» վերափոխել՝ «սոցիալ-տնտեսական տեսանկյունից», ուղղորդել տնտեսական փոխափայության* հայեցակարգը:

Մեզանում հասարակական, պետական կյանքի կազմակերպման, ազգային տնտեսության մոդելի վերջնական ընտրությունը պետք է կատարվի գոյություն ունեցող երկու հիմնական տիպերի միջև:

Առաջինը՝ այսպես կոչված ամերիկյան տիպն է, որը իրականացել է դասական տնտեսական ազատականության հայեցակարգով: Այստեղ պետության դերը հասարակության տնտեսական ու սոցիալական հարաբերությունների ոլորտում, ճիշտ է, ընդունվում է, սակայն այդպիսի կարգավորմանը ավանդականորեն հատկացվում է ավելի համեստ դեր, քան ինքնագործ տնտեսական ենթակառուցված: Ավնհայտ է, որ ԳՀ տնտեսական քաղաքականությունը մինչև օրս, որպես իշխող միտում, ունեցել է ամերիկյան ուղղություն, քեկուզ և իրական կյանքում այն անճանաչելիորեն ձևախնդվել է:

Երկրորդը՝ «սոցիալական շուկայական տնտեսության» կարգն է, որը դիտվում է որպես եվրոպական ուղղություն: Մյս տիպը գերիշխում է Արևմտյան եվրոպայում: Այստեղ տնտեսավարման կառուցակարգը չի պատկերացվում այլ կերպ, քան սոցիալապես ուղղորդված: Այլ կերպ սոցիալական խնդիրը ներառում է տվյալ պետական-տնտեսական կառույցին:

Տվյալ հայեցակարգն իր էությամբ «ազատ շուկայական տնտեսության» ազատական մոդելի յուրահատուկ տարատեսակն է՝ որոն հատուկ հատկանիշներով, անհատական ազատությունների երաշխավորում և մասավոր սեփականության իրավունք, տնտեսական վճիռների ապակենտրոնացում, ազատ զնազոյացում և ազատ մրցակցություն, ներքին շուկայի բացություն:

Սակայն «սոցիալական շուկայական տնտեսության» ներկայացուցիչները, ի տարբերություն դասական ազատականության ներկայացուցիչների, չեն ընդունում պետության ինքնաբազարիչ՝ տնտեսական և սոցիալական հարցերում: Օրինակ, Էրիարըը համարում էր, որ պետությունը պատասխանատվություն է կրում պետական տնտեսական քաղաքականության հետևանքների համար, կայուն իրավիճակի ստեղծման և տնտեսական վերելքի ապահովման համար: Նա պատասխանատու է ազգային տնտեսության մրցունակության և համաշխարհային տնտեսության հետ օրգանական ինտեգրման համար: Ավելին, տնտեսական կյանքում կարգավորիչ, պահանջի սկզբունքը պետության ակտիվ դերի հետ միասին, ըստ Էրիարի, այսօր ցանկացած համակարգի անբաժան մասն է:

* Տնտեսության փոխափայություն՝ տնտեսության դիտարկումը փոխափայության տեսանկյունից, ինչն ընդգրկում է տնտեսական գործունի արժեքային համակարգի՝ իբրև մշակույթի քաղաքականապիսին և համընդհանուր աշխարհայացքային սկզբունքների ամբողջությունը:

Սեզ համար տնտեսական համակարգի ընտրությունը ինքնամպատակ լինելի կարող: Այն պետք է բավարարի անվճար երկու պահանջ.

ա) ունենալ ինքնագարգացման ներքին կարողակամություն.

բ) ենթադրի սոցիալական** խնդրի լուծման հնարավորություններ:

Եթե նկատի ունենանք եվրոպական տնտեսական համակարգի հաջողությունների օրինակը, ինչպես նաև Արևելյան դաշինքի տնտեսական ծախսողման պատմությունը, իսկ սովյակ դեպքում էական է համաշխարհային փորձը, կտեսնենք, որ ազատության ու մրցունակության սկզբունքների վրա կառուցված հասարակարգը առավել չափերով է ազատագրում մարդու ստեղծագործական ներուժն ու նախաձեռնությունը: Ընդ որում, մրցունակության հանդեպ ուժեղացողությունը ուժեղացնում է ազատության դեմ: Քաղաքականության մեջ այն հանգեցնում է ամբողջատիրության (տոտալիտարիզմի), տնտեսության մեջ՝ հենց ձեռնբեղցության ազատության սկզբունքի քայքայման ու հրամայավարչական համակարգի վերակենդանացման:

Երկարը ընդգծում էր, որ ինքնահաստատման անհրաժեշտությունը հատուկ է շուկային: Մրցունակության հատկապես այդ ոգին է, որ պահհովում է տնտեսական առաջադիմությունը և գլխավորապես սպառողին, այսինքն՝ ողջ ժողովրդին թույլ է տալիս օգտվել աշխատանքի ավելի բարձր արտադրողականության պտուղներից: Այստեղից տրամաբանորեն հետևում է, որ շուկայական տնտեսության ավելի բարձր արդյունավետությունը թույլ է տալիս հասնել ավելիազգույն նպատակով թափարարմանը: Եկատի ունենալով Արևմտյան Գերմանիայի տնտեսական իրականությունը՝ էրիարդը նշում էր, որ ելնելով այդ գործառնության փոխկապվածությունից՝ մեր տնտեսական քաղաքականությունը կոչվում է նաև «սոցիալական շուկայական տնտեսություն»:

Ինքնին հասկանալի է, որ ոչ միայն շուկան, այլև ինքը՝ տնտեսությունը և նրա արդյունավետությունը ինքնամպատակ արժեքներ չեն: Նպատակը մարդուն ազատագրելն է, նրա ներուժն ու նախաձեռնությանը ճանապարհ բացելը, մարդու արժանապատիվ գոյության ապահովումը, նրա ոչ միայն նյութական, այլև հոգևոր պահանջները բավարարելու անավելագույն բավարարումը: Այս տեսանկյունից է, որ կարելի է գնահատել տնտեսական ցանկացած համակարգի իսկական իմաստն ու գոյության արդարացումը:

Ավելին, տնտեսական ու սոցիալական առաջընթաց (այս եզրակացությունն է հանգել նաև արդի սոցիալիստական շարժումը) կապված չէ սեփականության որոշակի ձևի հետ: Այն կախված է արտադրական անվան միավորների ազատ մրցակցությունից, առհասարակ մարդու ազատությանից, ինչը, սակայն, հնարավոր չէ կազմակերպել առանց պետության: «Սոցիալա-

կան շուկայական տնտեսության» հայեցակարգում, օրդոլիբերալիզմի*** կանխադրվածներում ընդգծվում է ուժեղ ու արդիական պետության անհրաժեշտությունը: Պատահական չէ, որ այս ուղղության տեսական մշակումները տեղավորվում են «սոցիալական շուկայական տնտեսության» հոգևոր հայր Կալտեր Օլքենի «տնտեսական կարգի» (Wirtschaftsordnung) շրջանակներում:

Օրդոլիբերալիզմը, գնահատելով ազատ մրցակցության դերը հասարակության տնտեսական առաջընթացի մեջ, միաժամանակ ցույց է տալիս «հին» ազատականության հիմնական սխալը՝ այն հաշվի չի առնում ազատ շուկայի մեծաշնորհներ (մոնոպոլիաներ) ձեռնու՝ կայունները, եական նշանակություն չի տալիս ոչնչով չսահմանափակված մրցակցության ծնած սոցիալական խնդիրներին: Եվ հաշվի առնելով վրա և մյուս եական սխալները, որոնք ծնում է դասական ազատականության վրա կառուցված տնտեսական քաղաքականությունը, գլխավոր օրդոլիբերալիստ դոկտոր Կալտեր Օլքենը 30–ական թվականների կեսերին մշակվեց սոցիալական շուկայական տնտեսության մոդելի հիմնական սկզբունքները: Դրանցից գլխավորներն են.

– գնագոյացման ազատություն և դրամաշրջանառության կայունություն,

– մրցակցություն առանց մեծաշնորհների և մասնավոր սեփականության անխախտություն,

*** Օրդոլիբերալիզմի գաղափարները մարմնացած են «սոցիալական շուկայական տնտեսության» (Soziale Marktwirtschaft) հասկացությունում, որի մերոյաբանական հիմքը «կարգի տեսություն» (Ordnungstheorie) է: Ծաղում է ORDO (կատ. կարգ) անազրի անվանումից: Հասկացությունը առաջին անգամ օգտագործել է Ալֆրեդ Մյուլլեր-Արմալը 1946 թ. (տես ORDO BD. 1, 1948, S. 125; Gesellschaft und Staat. Lexikon der Politik, München, 1992, S. 658–659): Այն կոչված էր երկրորդ աշխարհամարտից հետո արևմտյան պետությունների զավթած գոտում նախաձեռնել, որպես մյուս տնտեսական տեսություն, Արևմտյան Գերմանիայի տնտեսական, հասարակական–քաղաքական զարգացումը՝ ապահովելով ազատություն, արդարություն և բարեկեցություն բոլորի համար:

ORDO հասկացության կիրառությունը խորհրդայնական է: Այն որոշակի երազ է հարողուն Ֆրայբուրգյան դպրոցի գիտական հարցադրումներին՝ ընդգծելով պետության կարգավորիչ գործառնությունը: Ավելին, «սոցիալական շուկայական տնտեսությունը» որևէ օրդոլիբերալիզմի անվանում է նաև մրցակցային (Wettbewerbsordnung): Ordo–Liberalism (Neo–Liberalism)–ը ընդգծում է հատկապես Ֆրայբուրգյան դպրոցի մերկայացրեցիների հայացքների առանձնահատկությունը, նրանց հրաժարումը «մաքուր» ազատականությունից:

Արևմտյան Գերմանիայի վերածնունդը իրականացավ «սոցիալական շուկայական տնտեսության» մշակած սկզբունքներով հայտնի օրդոլիբերալիստ կոլեկտիվ էրիարդի ղեկավարությամբ: Այն պատմության մեջ մտավ գերմանական «տնտեսական իրաշք» անվանումը (Մանրամասն տես Յարպուսի Բ. Է., Լեդերս Էրիարդ: секреты "экономического чуда", М., 1997): Օրդոլիբերալիզմը երկրորդ ծնունդ ստացել էր 80–ականներից հետո, Արևելյան եվրոպայի երկրներում, ինչպես նաև Ռուսաստանում, որոնք, այս պիսով՝ Չայաստանի Գանրապետությունը, անցնում են վարչաիրամայակներից (սոցիալիստական Գերմանիայի նման) շուկայական համակարգի: Օրդոլիբերալիզմը թույլ է տալիս «գտնել» նոր աշխարհայացք, դաստիարակել սոցիալական շուկայական մտածողության «ազատության և կարգի» շրջանակներում:

** Սոցիալական (լատ. socialis)՝ ընդհանուր, հասարակական, ողջ միջմարդկային անվանումը, այսինքն այն ամենի, ինչը կապված է մարդկանց համատեղ կյանքի հետ, առաջին հերթին նրա, ինչը վերաբերում է հասարակությանն ու ընդհանրությանը, ինչն ունի հասարակական ու ընդհանուր բնույթ:

– տնտեսական ինքնուրույնություն և ձեռնարկատերերի պատասխանատվություն,

– պետության սահմանափակ տնտեսական դեր³:

«Չիշյալ դարոցի ներկայացուցիչները.— գրում է պրոֆ. Վիկտոր Վաներբըրգը.— համոզված էին, որ տնտեսական առողջ բաղաբաղկանությունը պետք է լինի առաջին հերթին կարգի բաղաբաղկանություն՝ ուղղված իրավական ու ինստիտուցիոնալ կառուցվածքների ստեղծմանը»⁴:

Այդ տեսության հիմնադիրները սոցիալական շուկայական տնտեսությունը դիտում էին որպես տնտեսական, սոցիալական և քաղաքական կարգ՝ առանձնացնելով հատկապես սոցիալական քաղաքականությունը, դրա յուրաքանչյուր դրսևորումով որպես շուկայի ազատության երկարաժամկետ երաշխավորի⁵:

Օրդոլիբերալիզմի տեսանկյունից պետությունն ինքը պետք է գիտակցաբար որոշի տնտեսակարգի շրջանակները՝ ահազանգելով հասարակության մեջ բացասական միտումների առաջացման մասին: Եւ պարտավոր է միջամտել տնտեսական գործունեությանը, որ ապահովվեն մրցակցության միասնադրվածները, և հետևի հաստատված «խաղի կանոններին»:

Պետության դերը, ըստ օրդոլիբերալների, հանդուս է ֆուտուրայիմ իրավարարի գործառնություն, «որի խնդիր չէ, որ ինքը խաղա, և ոչ էլ այն, որ բոլոր խաղացողներին հուշի նրանց բոլոր շարժումները, այլ այն, որ անբարեկերպալորի բոլոր կանոնների պահպանումը: Դա էլ այն պետությունն է, առանց որի իսկական շուկայական տնտեսությունը գոյություն ունենալ չի կարող»⁶:

«Արդի, իր պատասխանատվությունը գիտակցող պետությունը,— ավելացնում է Լ. Երիարդը,— չի կարող իրեն թույլ տալ պնդելու գիշերային պահպանի դերին»: «Ես փորձում եմ,— ընդգծում էր նա,— շուկայական տնտեսության քաղաքականության միջոցով մշակել նրա կարգը՝ դրան անհրաժեշտ խաղի կանոններով»⁷:

Օրդոլիբերալիզմը հանդես է գալիս առանձին անհատների ու տնտեսավարող սուբյեկտների տնտեսական շահերի նկատմամբ հասարակական շահերի գերակայությունից, հասարակական տարբեր շերտերի ներդրման համակցության հրամայականից՝ «կապիտալիստների» ու «բանվորների»՝ սոցիալական գործընկերության» անհրաժեշտությունից:

Ուշագրավ փաստ է, որ ներազգային խնդիրների հարցում, ճիշտ է՝ պատճառական այլ պայմաններում, նույն դիրքորոշումն ուներ նաև Լիկլու Գուանդը: 33 դաշնակցության Չորրորդ ընդհանուր ժողովին (1907 թ.) հղած դիմումով նա ժողովից պահանջում էր պաշտպանել հայ բանվորության շահերը միա-

ժամանակ թույլ չտալով սպանել հայ արդյունաբերությունը, իսկ «դասակարգային» հակամարտությունը պահել «փափուկ սահմանների» մեջ⁸: Եւ այն տեսակետն էր պաշտպանում, ըստ էության, հայ ազատական հոսանքը՝ նրա տիպական ներկայացուցիչ Ալ. Արասխանյանը⁹: Որովհետև, Ֆրիդրիխ Լիստի հեղինակավոր հաստատումով, «ազգային միասնությունն այն ժայռն է, որի վրա պետք է հենվի նրա բարեկեցությունը, հարգանքի հզորության շենքը, նրա անկա ապահովվածությունն ու գոյությունը, զայլից վեհությունը»¹⁰:

Ուստի պետությունը պարտավոր է ընդունել այնպիսի օրենքներ ու որոշումներ, որոնք հասարակությանն ու առանձին անհատներին պաշտպանում են անբարեխիղճ մրցակցությունից, կարգավորում են մրցակցային պայքարի սահմանափակումները: Պետությունը, համաձայն օրդոլիբերալների, պարտավոր է կարգավորել սոցիալական ոլորտը, պաշտպանել հաշմանդամների ու մայրության, ծերերի ու երիտասարդության իրավունքները, երաշխավորել սեփականության իրավունքի գործադրումը, ապահովել բժշկվելու և այլ իրավունքներ:

Տեղի է նկատել, որ դեռևս XIX դարի 70–ական թվականների գերմանական նոր պատմական դարոցի ներկայացուցիչները (Ք. Չիլդերբանտ, Գ. Հմելեր, Վ. Հոնքարտ) առաջադրում էին հասարակության մեջ սոցիալական արդյունավետ և արդարապես արժանապատիվ գործունեությունից, կարգավորում են մրցակցային պայքարի սահմանափակումները: Թեպետ օրդոլիբերալիզմը առաջնությունը վերապահում է անհատական նախաձեռնությանը, այդուհանդերձ ընդգծում է, որ հասարակական կյանքում եսամոլ շահը չպետք է սանձաբաղկության հասնի: Այն պետք է ենթարկվի հստակ սահմանափակումների: Ընդ որում, մրցակցությունը խթանվում է, իսկ շահույթի աճը ձեռք է բերվում առաջին հերթին իրավական ուժեղ շրջանակների հաստատումով, որն էլ սահմանափակում է տնտեսության մեծաշնորհյալացումը, «ամանբար մրցակցություն» առիտաբար: Դայաստանի մեծաշնորհյալացված տնտեսության վիճակի արժատական բարեփոխման տեսանկյունից բացառիկ հետաքրքրություն է ներկայացնում կարծիքը՝ հակակարծիային օրենքներ՝ ընդունման ու կիրառման փորձը Գերմանիայում: Այս օրենքը Երիարդը համարում էր «սոցիալական շուկայական տնտեսության» իր ըմբռնումների «միջուկը»¹¹:

Ավելին, պետությունը, սոցիալական շուկայական տնտեսակարգում իրականացնելով կարգավորում, կոչված է առանձին անհատների եսասիրտությունը ուղղորդել ընդհանուր բարօրության հուն:

Այսպիսով՝ տնտեսական արդար կարգը և տարբեր «խնթային շահերի» համաձայնեցումը, դրանց հաշվեկշիռի պահպանումը կարող է պահանջել միայն պետությունը, եթե ճիշտ է որոշում իր դերն ու խնդիրները:

³ Տե՛ս Eucken W., Die Grundsätze der Wirtschaftspolitik, Tübingen, 1952, էջ 254–269:
⁴ Ванберг В., «Теория порядка» и конституционная хозяйство. — «Вопросы экономики», 1995, N 12, էջ 87:

⁵ Եւ այն տեղում, էջ 89:

⁶ Ropke W., Die Gesellschaftskrisis der Gegenwart, Zürich, 1942, էջ 310–311:

⁷ Erhard L., Wohlstand für Alle, Düsseldorf, 1957, էջ 135, 241:

⁸ Տե՛ս Վարանդյան Մ., 33 Դաշնակցության պատմություն, Փարիզ, 1932, հ. 1, էջ 487–488:

⁹ Տե՛ս Արիդյան Ռ., Ավելիոր Արասխանյան, Եր., 1980:

¹⁰ Лист Ф., Национальная система политической экономии, СПб, 1891, с. 425.

¹¹ Зарницкий Б. Е., Людиг Эрхард: секреты «экономического чуда», с. 135.

Առաջին. պետությունը պարտավոր է սահմանել խաղի պարզ, միասնական և արդար կանոններ, որոնք թույլ չեն տա արտոնություններ, ոչ էլ խտրականություն:

Երկրորդ. պետության խնդիրն է հետևել, որպեսզի այդ կանոնները պահպանվեն խաղի բոլոր մասնակիցների կողմից:

Յրրորդ. պետությունն ինքը չպետք է միջամտի խաղին: Նրա գործառույթը անկողմնակա իրավարարի դերն է, որը սղարգում է խաղացողների վարքագիծը դաշտում՝ համաձայն մշակված կանոնների:

Չորրորդ. նրանց համար, ովքեր (տարիքի, հիվանդության կամ այլ պատճառներով) ի վիճակի չեն մասնակցել մրցակցությանը, պետությունը պարտավոր է ապահովել սոցիալական պաշտպանության անհրաժեշտ նվազագույնը:

Առանձին հետաքրքրություն է ներկայացնում «սոցիալական շուկայական տնտեսության» ընդգծված ծգտունը՝ լուծել ոչ միայն տնտեսական, այլև սոցիալ-քաղաքական խնդիրներ: Լայն առումով այն ուղղված է մարդուն, նրա ազատությանը, սոցիալական պաշտպանությանը: Դաթձայն հիշե՛ք Լ. Էրհարդի դիրքորոշումը. «սոցիալական շուկայական տնտեսության» համակարգի արդյունավետությունն ու արդարությանը գլխավոր չափանիշը ոչ թե ձեռնարկատերերի շահույթների չափերն են, այլ այն առավելությունները, որոնք ստանում են սպառողները: Սի հայեցակարգ, որը ճանապարհ է քայցում դեպի ազատ, տնտեսապես արդյունավետ, ինքնազարգացող կայուն հասարակություն»:

Դասական ազատակամության նախկին՝ քաղաքականության հանդեպ տնտեսության առաջնության կանխադրույթին օրդոլիբերալները հակադրում են տնտեսության նկատմամբ քաղաքականության ու պետության առաջնության տեսակետը: Ընդ որում, պետության միջամտության նպատակը տնտեսության դիրքում սահմանափակվում է «գործունակ շուկայական տնտեսությանը» օժանդակելով, իսկ միջամտության միջոցները՝ «շուկայականի» շրջանակներով: Այլ կերպ՝ պետությանը հնարավորություն է տրվում ազդել միայն դրամավարկային քաղաքականության լծակներով:

Իհարկե, քննվող սոցիալական շուկայական տնտեսակարգը բազմաբնույթ է և Դայաստանի համար ուսանելի: Ուսանելի է նաև այն պատճառով, որ տվյալ համադրույթը թույլ է տալիս, կարծում ենք, ներդաշնակության եղբեր գտնել հասարակական-տնտեսական կարգի և, տվյալ դեպքում, հայաց մենթալիտետի միջև, այն ծառայեցնել ժողովրդի քաղաքական ու հոգևոր վերածննդին: Եվ այդ իմաստով անհրաժեշտ է «ազգայնացնել» այն: Առավել սև, որ այն «ներծծված» է քրիստոնեության սոցիալական դավանանքի երկու անձի և փոխարկելիության հիմնական սկզբունքներով:

Առաջինը պետության ուշարդության կենտրոն է մղում մարդուն՝ նրան վերածելով տնտեսական ու հասարակական գործունեության չափանիշի: Եվ այդքանով հարթահարում է բուշնիկյան Նուտրիզը (Ֆրանսերեն etat-պետություն): Երկրորդն, ըստ էության, ծառայում է ընդունվող ընդհանուր որոշումների ապա-

կենտրոնացմանը՝ առավելագույն ինքնուրույնություն և նախաձեռնություն վերապահելով հասարակական կյանքի կազմակերպման ստորին օղակներին, յուրորհանկ ամեն սահման դաժանիքով տնտեսական գործունեության պետական կարգավորման ու սոցիալական հարաբերությունների միջև: ապահովելով առավելագույն ճկունություն առանձին տնտեսական սուբյեկտների ու նրանց միավորումների, նա պետական կառույցների ու գործառույթների միջև:

Սոցիալական շուկայական տնտեսության համադրույթը և դրանից բխող գործունակ քաղաքականությունը, արտահայտելով ժողովրդի իրմնական զանգվածի և ազգային կապիտալի կենսական շահերը, կարող են հանդես գալ իբրև իրական այլընտրանք գոյություն ունեցող համակարգին, կարող են ԳԳ տնտեսական և քաղաքական նպատակների բազմակարգություն ուղղորդել տևական ժամանակաշրջանով: Եթե, անշուշտ, պահպանվի իրական վերափոխումների այն մեթոդաբանությունը (մարտավարությունը), որն անցել է գործունակ քաղաքականության փուլով: Նույն Երհարդը, նկատի ունենալով Գերմանիայի անցման շրջանի բազմաբովանդակ կյանքը, համարում էր, որ համապատասխան քաղաքականության արդյունավետության համար, այն պետք է հասկանալի լինի քաղաքացիներին, համոզի նրանց իր ճշմարտացիությանը, լինի հետևողական, քանզի տնտեսումներով վարվող քաղաքականությունը վատթարագույն է: Նա պետք է լինի բաց ու ազնիվ և ի վերջո մարտավարորեն ճիշտ կառուցվի, ուստի և կողմնորոշվի ոչ միայն երկարաժամկետ վերջնական արդյունքներին, այլև բնակչության ժամանակային ակնկալիքների տեսակետից լինի համոզիչ՝ ցուցադրական արդյունավետ տպավորություններով¹²:

Անտարակալ սոցիալական շուկայական տնտեսության սկզբունքներով ստեղծված ԳԳ ազգային տնտեսության համալիրը «կրավարի» ԳԳ գալիքով շահագրգիռ շերտերին, որոնք բվում՝ ինչպես «աշխատավոր ընդհանրությանը», այնպես էլ մտավորականությանն ու արդյունաբերող դասակարգին: Այն կհամադրի ավանդականությունն ու երկրի քաղաքական-տնտեսական արդիականացումը:

Ուսանելի է Գերմանիայի սոցիալ-դեմոկրատական կուսակցության տեսակալ հայեցակարգի «ճշգրտման» փորձը՝ «Գոթեթերգյան ծրագրի» (1959) ընդունումից հետո, երբ տեղի ունեցավ նրա տնտեսական պատվիրոսի մերժեցումը՝ «սոցիալական շուկայական տնտեսության» հայեցակարգին: Այն արտահայտվեց ոչ միայն «մրցակցություն ողբան հնարավոր է, պլանավորում ողբան անհրաժեշտ է» ծրագրային դրույթով, այլև այն բանով, որ գալով իշխանության նրանց ոչ միայն չկարողացան, այլև նույնիսկ չուզեցին արձատապես փոխել տնտեսության կարգավորման գոյություն ունեցող, փաստորեն, երհարդյան համակարգը: Իսկ Գերմանիան դրանից շահեց: Ուշագրավ է նաև Դարավային 4-ովկաթի երկրների զարգացման առաջատարությունների ընտրության մասին և. Ընելյովի առաջարկների համալիրը: Դրանք են.

• ազարային սեկտորի արգագանով զարգացում՝ դրա արմատական բարեփոխման ճանապարհով,

¹¹ Նույն տեղում, էջ 137:

¹² Նույն տեղում, էջ 33:

• այդ երկրների վերածուցնը մշակող գլոբալ արդյունաբերության «հավաք-
ման հրապարակ»».

- սեփական բնական էներգետիկ պաշարների ինտենսիվ շահագործում,
- մասնագիտացում տարանցիկ առևտրային և տրանսպորտային ծառայ-
ությունների մեջ:

«Առջ անցնող» տիպի ամենահաջողված երկրները իրենց տնտեսական
նազնավարության մեջ համակցել են տվյալ չորս ուղղությունները¹²:

ԳԴ-ում ընթացող ներքին գործընթացները, ժողովրդի զանգվածային
հիասթափությանը, հայոց հասարակական-քաղաքական գաղափարները մղում
են ծախ-կենտրոն: Առջիակալան արդարության հանդեպ «բնածին» հակու-
մներ ունեցող ժողովուրդը կանի իր ընտրությունը, իսկ Արևելք-Արևմուտք երկ-
րաքաղաքական խաչմերուկում գտնվող հանրապետությունը կգարզանա,
մշակութային երկխոսության «դաշտում» գտնվող հայկական քաղաքակրթու-
թյունը կարծանազորի իր առաջընթացը, դեպի եվրոպական քաղաքակրթու-
թյուն ուղղորդված ժողովուրդը կշահի, եթե XXI դարը ԳԴ համար դառնա
«կարգի տեսություն» հասարակություն:

Եվ դրանով ԳԴ-ն կզբաղեցնի քաղաքական կիր տեղը տարածաշրջա-
նում ու ժողովուրդների համաշխարհային հանրակցության մեջ: Գարշապոժ
ու զարգացող ԳԴ-ն կստանա հնարավորություն իրականություն դարձնելու
հավասարակշռության երաշխավորի գործառույթ նույն տարածաշրջանում:

ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐԱԿՆԱՍՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՁ

Ազգային գաղափարախոսության մշակման հարցը հայ փիլիսոփայական և
գիտաքաղաքական մտքի հերթական և իրատապ խնդիրն է: Այն քաղղ է ոչ
միայն գոյարանական և իմացարանական հարցադրումների տեսանկյունից,
այլև համաշխարհային հանրության մեջ իշխող ընդհանուր տրամադրության
առումով: Մասնավորապես, համաշխարհայնացման (գլոբալացման) և ազա-
տականության (լիբերալիզմ) հարցարշակի պայմաններում չի խրախուսվում
ինչպես ազգային ուսումնասիրությունն առիտային, այնպես էլ կոմկրետ ազ-
գային գաղափարախոսության մշակումների ձեռնարկները: Մակայն, որպես
XX դարի երկրորդ կեսերի ընդհանուր երևույթ, ազատականության հարթա-
րավի ծնուն է նրա հակադարձությունը, **ինդիգենացիայի** գործընթացը, որը
դիտվում է որպես վերադարձ ազգային արձատներին: Այն (ինդիգենացիան)
բնորոշ է ԱՊԳ տարածքի բոլոր պետական կազմավորումներին ու նույնիսկ պե-
տական իշխանությունն չունեցող ազգերին, գրեթե առանց բացառության:

Անկախ պետականության, տարածաշրջանային տեղաշարժերի և համաշ-
խարհային քաղղ գործընթացների մեր օրերում պատմության և մշակութային հա-
րուստ ժառանգությունն ունեցող հայ ժողովրդի համար հիմնականորի բնակրու-
մ ու համապատասխան հայեցակարգի մշակումը դառնում է խիստ իրատապ, որի
վերջնական արդյունքը, մեր կարծիքով, ազգային իդեալի առաջադրումն է:

Չալացարդան շրջանակներում ամհրաժեշտ է առնվազն հետևյալ զույգ
հասկացությունների

I խումբ

գաղափարախոսություն
նույնացում
ինքնություն
ինքնագիտակցություն
մշակույթ (քաղաքակրթություն)
աշխարհայացք

II խումբ

ազգային գաղափարախոսություն
ազգային նույնականացում
ազգային ինքնություն
ազգային ինքնագիտակցություն
էթնոմշակույթ (հայկական քաղաքակրթություն)
ազգային աշխարհայացք

բովանդակության բացահայտումը:

Եթե առաջին խումբ հասկացություններն ունեն **ընդհանուր** բնույթ և անհ-
որոշել է նրանք բովանդակության բացահայտումն առիտարակ, ապա երկ-
րորդ խումբ հասկացությունները **եզակի** են, նրանք են, որ պահանջում են
մեր կողմից մանրակրկիտ ուսումնասիրություն, և որոնք միջոցով է, որ հնա-
րավոր է սահմանել այն **ուրույն, ինքնատիպ (եզակի)** հատկանիշները, ո-
րոնք բնորոշ են հայ ժողովրդի հոգեբանությանը, նրա մշակույթին (քաղա-
քակրթությանը) և պատմությանը:

Ավելորդ չէ ընդգծել, որ հայոց ազգային գաղափարախոսությունը պար-
փակված է առաջին հերթին նրա պատմության, էթնոմշակույթի (քաղաքակր-
թության) և Գայաստանի աշխարհագրության մեջ:

Ուստի, աշխատանքի շահեկանությանը պահանջում է սահմանել երկ-
րորդ խումբ հասկացությունների բովանդակությունը որպես ամեն մի հետա-
զոտության իրականացման մեկնակետի: Եվ այսպես.

Ազգային գաղափարախոսությունը հայացքների մի համակարգ է ազ-
գի, նրա արժեքների, նպատակների ու ակնկալիքների, նրա քաղաքականու-
թյան ու արևելակերպի, հոգեկերտվածքի ու հատկապես բնավորության, ու-
րիշ էթնոմշակույթի տարբերության ու նրանց հետ նմանության և այլնի մասին
(Ա. Լալաջյան): Ազգային գաղափարախոսությունը պրտախայտում և պաշտ-
պանում է ազգի շահերն ու արժեքները պետական իշխանության ուղղուտում,
համաշխարհային հանրության համապատասխան կառույցներում (ինտելի-
տուտներում): Ազգային գաղափարախոսությունը հանդես է գալիս որպես
ազգային քաղաքական շարժումների հոգևոր հիմք: Այն բխում է ազգային ի-
դեալից, ծառայում է նրա հիմնավորմանն ու իրականացմանը:

Ազգային ինքնագիտակցությունը պատկերացումների այն մակարդակն է,
որը բնորոշում է այս կամ այն ազգային հանրությանը պատկանող մարդկանց
կողմից նրա իդեալների, մշակութային նորմերի, ավանդույթների, կենցաղային

¹² Гаджиев К.С., Геополитика Кавказа, М., 2001, с.64.

ստեղծողի պնդումը, ինչպես նաև տվյալ սոցիալ-էթնիկական հանրության կողմից ողջ հասարակության մեջ նրա շահերի ու դրույթյան ընթացումը:

3.9. – Անհրաժեշտ է նկատել, որ ուժեղ և կայուն ազգային ինքնագիտակցության անկայությունն է հատկանշում հայկական էությունը, որի հիմքում ընկած է, անվասակած, առաջին հերթին, էթնոշնչությունը:

Չուգահեռաբար, պետք է կարողանալ տալ «ազգ» հասկացության իրական բովանդակություն սահմանումը, հարցադրելով թե՛ «գիտական» գրականության մեջ տարածված մարքս-լենինյան ըմբռնումը, թե՛ Արևմուտքում լայնորեն տարածված հայեցակարգերի միակողմանիությունն ու արտապատմականությունը, և թե՛ զանգվածային գիտակցության ոլորտում տասնամյակների ընթացքում կայունացած արձատու մեղքը:

ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ. ՀԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ, ԷՈՒԹՅՈՒՆԸ, ԶԵՎԱԿՈՐՈՒՄԸ, ԱՌԱՋԱՆԱԳԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Անվտանգությունը հասարակական օրգանիզմի այն վիճակն է, երբ նա ներքին ու արտաքին անբարենպաստ ներգործությունների պայմաններում էլ պահպանում է իր անբողոքությունն ու ինքնազարգացման կարողությունը: **Ազգային անվտանգությունը** սահմանվում է որպես կապերի ու հարաբերությունների այնպիսի ամբողջություն, որոնք բնութագրում են անձի, հասարակության և պետության մի վիճակ, երբ պահպանվում է նրանց հաստատուն գոյությունը, կենսական պահպանման գերիշխող բավարարումն ու իրականացումը, ներքին ու արտաքին վտանգների արդյունավետ կասեցումը, անձի, հասարակության և պետության ինքնազարգացումն ու առաջընթացը:

Ազգային անվտանգությունը արտացոլում է անվտանգության կապը ազգի որպես ամբողջական համակարգի հետ: Վերջինս իր մեջ ընդգրկում է հասարակական հարաբերություններն ու ազգային գիտակցությունը, հասարակության ինստիտուտներն ու նրանց գործունեությունը, որոնք և ապահովում են ազգային շահերի իրականացումը պատմականորեն ձևավորված կոնկրետ իրողության մեջ: Ազգը տվյալ դեպքում հանդես է գալիս որպես էթնիկական մի հանրություն իր ավանդույթներով, սովորույթներով ու մշակույթով:

Ընդունված է առանձնացնել ազգային անվտանգության երեք մակարդակ, անվտանգության երեք սուբյեկտ **անձ, հասարակություն և պետություն**: Անձի անվտանգության համար հանգուցային խնդիր է նրա իրավունքների և ազատությունների պահպանումը, հասարակության համար կայունությունը, քաղաքացիների կյանքի նորմալ պայմանների պահպանումը, նյութական ու հոգևոր արժեքների բազմապատկումը, պետություն համար՝ նրա ինքնիշխանությունը, տարածքային ամբողջականությունը, սահմանադրական կարգը: Ընդ որում՝ ազգային անվտանգությունը ան-

բողջության մեջ բազմակարգ է, համալիր, իսկ հաճախ՝ հակասական մի համակարգ: Ուստի նա պահանջում է գիտաքաղաքական չափանիշների կիրառություն:

Ազգային անվտանգության **հայեցակարգը** (կոնցեպցիան) հայացքների որոշակի համակարգ է անձի, հասարակության և պետության գոյությունն ու առաջընթացը ապահովելու մասին: Այն անվտանգության ըմբռնման, մեկնաբանության եղանակ է, հիմնական տեսակետ, նրա համակարգային մեկնաբանության ղեկավարող գաղափար, առաջատար մտահղացում, կառուցողական սկզբունք: Անվտանգության հայեցակարգը ձևավորվում է երկրի աշխարհագրական, բնակլիմայական, տնտեսական, Ժողովրդագրական, ընկերային, քաղաքական, ռազմաքաղաքական, ազգագրական, քաղաքական ու այլ ազդակների, ազգային ու մշակութային ավանդույթների ճանաչողության հիման վրա: **Վարդապետությունը** (դոկտրինը) ուսմունք է, սկզբունքների ամբողջություն, համակարգված տեսություն: Անվտանգության վարդապետությունը ձևակերպում է իրենուժ արտահայտում է անվտանգության ռազմավարական ընդհանուր նպատակները: Շատ հաճախ նա պետական պաշտոնական որոյսների համակարգ է: Հայեցակարգը (կոնցեպցիան) նախորդում է վարդապետությանը (դոկտրինին): Հաճախ վարդապետությունը ընկալվում է որպես հայեցակարգ: Մինչդեռ՝ վարդապետությունը ձևավորվում է որոշակի հայեցակարգի շրջանակներում:

Անվտանգության հայեցակարգը հիմնական ռազմավարական գերխնդիրները ձևակերպում է ընդհանուր հասկացություններով, որոշակիորեն վերացարկվում է հասարակական կոնկրետ իրադրությունից, ընդգրկում է պատմական տևական ժամանակաշրջան: Ուստի և կոնկրետսանում է իր քաղաքաձայնություն: Բովանդակային առումով ազգային անվտանգության ընդհանուր հայեցակարգի մեջ ընդունված է առանձնացնել քաղաքական, տնտեսական, օպերատիվ, բնապահպանական, տեղեկատվական (ինֆորմացիոն) անվտանգությունը, ինչպես նաև ազգի մշակութային զարգացման անվտանգությունը (առաջնահերթությունները որոշվում են ազգային շահերի սահմանման ծրագրաբանությամբ): Յուրաքանչյուր երկրի, այդ թվում նաև արդի Հայաստանի անվտանգությունը էապես կախված է արտաքին միջավայրից: Հայաստանի պայմաններում կենսական են տարածաշրջանային՝ Հարավային Կովկասի, Սեբաստիոնի կրեյթի, Եվրոպական և միջազգային անվտանգության համակարգերը:

Անվտանգության ոլորտների ապահովման հիմնական սուբյեկտը պետությունն է, որն իր տվյալ գործառույթը իրականացնում է օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների միջոցով՝ գործող հասարակական օրենսդրության շրջանակներում: Անկային պետությունը ինքն է անվտանգ գոյություն պահանջ ունի: Իշխանության քարծիրագույն մարմինները այդ խնդիրը լուծում են հատուկ պետական կառույցների, ամբողջ բնակչության օգնությամբ: Պետականվտանգությունը աշխարհի քոլոր պետությունների առաջնահերթ հոգացողության և ուշադրության առարկան է: Անվտանգության ապահովման անմիջական գործառույթի իրականացման համար

գործողիդ իշխանության համակարգում կազմավորվում են անվտանգության համապատասխան մարմիններ: Պետանվտանգության կարևոր խնդիրը ազգային անվտանգության վտանգների (սպառնալիքների), այսինքն ազգի հասարակության և պետության կենսական շահերի վտանգ ներկայացնող պայմանների ու գործոնների հանրագումարի կանխատեսումն ու ժամանակին վերացումն է:

Պետանվտանգության գլխավոր խնդիրն է այնպիսի տնտեսական, քաղաքական, միջազգային ու ռազմագիտական պայմանների ստեղծումն ու պահպանումը, որոնք թույլ կտան ազգի՝ որպես ամբողջության, համակողմանի զարգացումը: Այս հանգամանքը քաջաշիկ նշանակություն ունի հայության, որպես աշխարհասփյուռ ժողովրդի, ուժերի ու կարողությունների համախմբման տեսակետից՝ ազգային պետության միջազգային դիրքերի ամրապնդման և տարածաշրջանային գործոնի ապահովման ռազմավարական նկատառումներով:

Ազգային անվտանգության ապահովման հիմքում կարող են ընկած լինել հետևյալ սկզբունքները.

- սահմանադրական կարգի պաշտպանությունը,
- անվտանգության բոլոր բաղադրամասերի միասնությունը, փոխգործողությունը և հավասարակշռությունը, առաջնահերթությունների փոփոխումը՝ կախված իրադրությունից,
- անվտանգության քաղաքական, տնտեսական և տեղեկատվական ապահովումը,
- իրապաշտությունը (առկա ռեսուրսների, ուժերի և միջոցների հաշվառումով) ներքին ու արտաքին քաղաքական խնդիրների առաջարդման ժամանակ,
- միջազգային օրենսդրության գերազանց իմացությունը և համապատասխան կիրառությունը,
- անվտանգության ապահովման ուժերի և միջոցների կենտրոնացված համակարգումը,
- Չայաստանի ազգային շահերի պաշտպանության նպատակով կանխատեսման ծառայությունների ստեղծումն ու հստակ կազմակերպումը և նախականխող հարվածների վերաբերյալ որոշումների ընդունումը:

Որնէ երկրի, առավել ևս Չայաստանի ազգային անվտանգության հայեցակարգը մշակելիս անհրաժեշտ է օրյնկեփվ իրողությունների (սկզբունքների) հաշվառում, որոնցից են.

- երկրի աշխարհագրական դիրքը և Չարավային Կովկասի, մեծ հաշվով Մերձավոր Արևելքի երկրաքաղաքական (գեոպոլիտիկական) տարածաշրջանի առանձնահատկությունները,
- տարածաշրջանով շահագրգիռ հիմնական պետությունների՝ Ռուսաստան, ԱՄՆ, Թուրքիա, Իրան, Չինաստան, Եվրամիություն երկրառազմավարության (գեոստրատեգիայի) իմացությունը,
- Ադրբեջանի և Վրաստանի ներքին կյանքի ու արտաքին քաղաքական

նության վերաբերյալ համապարփակ տեղեկատվության կուտակում, վերլուծություն և նրանց հիման վրա անվտանգության սցենարների մշակում,

- հայոց քաղաքակրթական-մշակութային յուրահատկությունը,
- հայ ժողովրդի աշխարհասփյուռ վիճակը,
- հայ ժողովրդի ազգային հոգեկերտվածքի առանձնահատկությունները և այլն:

3.9. – Դարկ է նկատի ունենալ, որ ազգային անվտանգության հայեցակարգերն ու վարդապետությունները, որպես կանոն, մշակվում են ազգային շահերի սահմանումից հետո և նրանց չբռնակներում: Եվ ընդհանրապես, ազգային կենսական շահերի սահմանման միջոցով է միայն հնարավոր անտորոշել անվտանգության վտանգների (սպառնալիքների) հիմնական ուղղությունները և մշակել անվտանգության ապահովման իրավաքաղաքական մեխանիզմները:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Արևելյան Հայաստան, ռազմավարական նշանակությունը,	3
Հանքինգբրնի հիպոթեզը և հայոց քաղաքակրթական ինքնությունը	12
Տնտեսական ռազմավարության այլընտրանքը	24
Ազգային գաղափարախոսության հարցի շուրջ	34
Ազգային անվտանգություն, հասկացությունը, էությունը, ծնավորումը, առաջնահերթությունները	36